

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Պայտըն-Փութին Յուսակցութիւնը Եւ Ռուսաստանի Արտաքին Քաղաքականութիւնը

Վերջին շաբաթներուն Արեւմտեան երկիրները՝ գլխաւորութեամբ Միացեալ Նահանգներուն, ահագանգ կը հնչեցնեն, որ Ռուսաստան կը պատրաստուի ներխուժելու Ուքրանիա ու այդ նպատակով զինուորական մեծ կուտակումներ կը կատարէ երկու երկիրներու սահմանին: Արեւմուտքը զգուշացնելով կը յայտարարէ թէ, մնան զարգացումներու պարագային պատրաստ է կիրարկելու շատ աւելի խիստ պատժամիջոցներ՝ Ռուսաստանի դէմ:

Կացութիւնը մեղմելու նպատակով Դեկտեմբեր 7-ին, հեռակայ կապով խօսակցութիւն տեղի ունեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Ժոզէֆ Պայտընի եւ Ռուսաստանի դեկավար՝ Վլատիմիր Փութինի միջեւ, որու ակարտին իւրաքանչիւր կողմ հանրայնացուց բանակցութեան բովանդակութիւնը՝ ժամանակով իր կողմի արտայայտած տեսակետներուն վրայ:

Ըստ Ամերիկեան կողմին, նախագահ Պայտընը ըսած է թէ, ինք պատրաստ է ընելու այն ինչ, որ չեղաւ 2014 թուականին Ռուսաստանի կողմէ Խրիմի գրաւումէն ետք: Խօսքը անշուշտ տնտեսական այնպիսի պատժամիջոցներու մասին է, որոնք կրնան կաթուածահար ընել Ռուսաստանի տնտեսութիւնը: Առնուազն այդպէս կը խորհին Արեւմուտքի մէջ:

Ռուսական կողմը յայտարարեց, որ նախագահ Փութին մերժած է Պայտընի մեղադրանքները ու ըսած է թէ Արեւմուտքն է որ, կը հրահրէ իրավիճակը տարածաշրջանէն ներս՝ բարձրացնելով ռազմական կարողութիւնները: «Դուք կը մտահոգուիք ձեր սահմաններէն հազարաւոր քիլոմետրներ անդին կատարուող իրադարձութիւններով, սակայն անոնք տեղի կ'ունենան ճիշդ մեր սահմանին», ըսած է նախագահ Փութին:

Քաղաքական մեկնաբաններու կարծիքով Ռուսաստանի գլխաւոր մտահոգութիւնը կապուած է Ուքրանիոյ ՆԱԹՕ-ի ուխտին անդամակցութեան հետ, որուն կը ձգտի այդ երկիրը, իսկ ՆԱԹՕ-ն առայժմ կը խուսափի այդ քայլին դիմելէ: Մոսկուայի բոլոր քայլերը ներկայիս կը միտին արգիլելու զինուորական այդ դաշինքի յայտնուիլը իր սահմանին մօտ: Ռուսական կողմը միշտ կը յիշեց-

Հաագայի Դատարանը Ատրպէյճանէն Ու Հայաստանէն Պահանջեց Կանխել՝ Ատելութեան Հրահրումը



Հաագայի Միջազգային Դատարանի նիստերու դահլիճը

Դեկտեմբեր 7-ին, Հաագայի մէջ գործող ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային դատարանը ներկայացուց իր որոշումները Ատրպէյճանի դէմ հրատապ միջոց կիրառելու Հայաստանի դիմումի վերաբերեալ եւ Ատրպէյճանի կողմէ Հայաստանի դէմ դիմումի վերաբերեալ:

Հայաստանի կողմէ ներկայացուած դիմումի պահանջներէն մէկը

գերիներու ազատ արձակումն էր: Թէեւ դատարանը նշեց, որ միջազգային մարդասիրական իրաւունքը կը սահմանէ, որ որեւէ պետութեան կողմէ ռազմական գործողութիւններու ժամանակ գերեվարուած անձեր պէտք է ազատ արձակուին, այնուամենայնիւ չհամարեց, որ գերիները կամ պահուող

Ս.Դ.Հ.Կ.ի Շնորհաւորական Այցը Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան Աւագ Հովիւ Վեր. Հենրիկ Շահնազարեանին



ՍԴՀԿ ներկայացուցիչները Հայ Աւետարանական Միութեան պատասխանատուներուն հետ

Վերջերս Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան աւագ հովիւ նշանակուած էր երիտասարդ եւ ժրջան պատուելի Հենրիկ Շահնազարեան: Իր այս յոյժ կարեւոր եւ նշանակալի պաշտօնը շնորհաւորելու համար, անցեալ Հինգշաբթի, 2 Դեկտեմբեր, 2021, ՍԴՀԿ Արևմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը, այցելութիւն մը տուաւ Կլենտէյլի իրենց համայնքային կեդրոնին մէջ:

Սոյն հանդիպման ներկայ էին ՀԱՀԱ Միութեան աւագ հովիւ Վեր. Հենրիկ Շահնազարեան, Կիլիկիա Հայ Աւետ. Եկեղեցւոյ հովիւ Վեր. Սերոբ Մկրտիչեան, փրոֆ. Վահրամ Շէմմասեան եւ փրոֆ.Յասմիկ Պարան:

Սոց. Դեմ. Հնչակեան կուսակցութեան Վարիչ Մարմնի ատենապետ՝ ընկ. Վազգէն Խոտանեան, պատուիրակութեան, ինչպէս նաեւ

Երեւան ՀՀ Ինքնիշխանութեան Նկատմամբ Սպառնալիք Կը Որակէ Ալիեւի Յայտարարութիւնը

Պաշտօնական Երեւան «սաղորիչ, ապականուողական հռետորաբանութիւն» եւ Հայաստանի տարածքային ամբողջականութեան ու ինքնիշխանութեան նկատմամբ սպառնալիք որակած է Ատրպէյճանի նախագահի վերջին յայտարարութիւնը: Դեկտեմբեր 6-ին, Ղուպայի շրջանի մէջ գիւղացիներուն հետ հանդիպման ժամանակ Իլհամ Ալիեւ պահանջած էր, որպէսզի Հայաստանը «Զանգեզուրի միջանցքի» բացման ժամկէտը հրապարակէ, եւ չիշեցուցած էր 44-օրեայ պատերազմէն առաջ իր յատարարութիւնները:

«Ես կը պահանջէի, որ մեզի ներկայացնեն մեր հողերու ազատագրման օրը, եւ այն ատեն միայն կանգ կ'առնէք: Նոյնը կ'ըսեմ հիմա. յայտարարեցէք, թէ երբ պիտի բացուի Զանգեզուրի միջանցքը, եւ ինչիւրիւնք չեն ըլլար», - ըսած է Ալիեւ:

Մահացած է ԱՄՆ-ի Նախագահի Նախկին Թեկնածու, Հայամէտ Պոպ Տոլ



Նախկին ծերակուտական՝ Պոպ Տոլ

98 տարեկանին կեանքէն հեռացած է ամերիկեան քաղաքական դաշտի վեթեռաներէն մէկը՝ նախկին ծերակուտական եւ նախագահութեան թեկնածու՝ Պոպ (Ռոպերթ) Տոլ:

Հանրապետական Տոլ առաջիններէն էր, որ անցեալ դարու 80-ականներուն Ուաշինկթըն լոպպիստական աշխոյժ գործունէութիւն ծաւալեց յանուն ԱՄՆ-ի կողմէ Հայոց ցեղասպանութեան

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Արդէն Մի Քանի Սերունդ Պատերազմ Տեսած Արցախցուն Դժուար Ե Կրակոցներով Վախեցնել

ԱՐՄԵՆ ՎԱՐՂԱՆԵԱՆ

Արցախի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի շփման գծում արձանագրուեց հրադադարի խախտման հերթական դէպքը: Ատրպէյճանի զինուած ուժերը Դեկտեմբերի 2-ին Մարտունու շրջանի Կարմիր շուկայ համայնքի ուղղութեամբ տեղակայուած դիրքերից կրակահերթեր են արձակել, որոնք տեւել են 10-15 րոպէ: Ատրպէյճանցիները կիրառել են հիմնականում հրաձգային զինատեսակներ: Հրադադարն արձանագրուել է հայկական խոշոր բնակավայրի հարեւանութեամբ, եւ կրակոցների ձայները մօտիկից լսել են տեղի բնակիչները:

Միջադէպը յաջորդեց Սոչիի հանդիպմանը, որտեղ ՌԴ խաղաղապահ ուժերի վերահսկողութեան գօտում Ատրպէյճանի կողմից պարբերաբար կատարուող խախտումներն Ալիեւը բնութագրեց որպէս համակարգային խնդրի պատահական դրսեւորումներ: Սոչիի հանդիպումից կարճ ժամանակ անց Արցախի բնակավայրի բնակելի տների ուղղութեամբ արձակած այս կրակահերթերից կարելի է ենթադրել, որ Ալիեւի արդարացումն ընդունուել է, եւ վերջինս իրեն նեղութիւն չի տալիս զինուած ուժերին ասելու, որ եռակողմ յայտարարութեամբ սահմանուած հրադադարի պահանջը կատարեն,

Մոսկուայում Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի փոխ վարչապետների մակարդակով բանակցութիւններն ընդհատուել են, իսկ ընդհատման պատճառը հերթական անգամ Ատրպէյճանի առաւելապաշտական ձգտումներն են եղել: Ինչպէս յայտնել է ՀՀ Անվտանգութեան խորհրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը, Ատրպէյճանը կրկին բանակցութիւններում առաջ է քաշել Միւնիքով վերաբացուելիք ճանապարհի հարցում միջանցքի տրամաբանութիւնը: Սա՝ այն դէպքում, երբ Սոչիի եռակողմ հանդիպման ամփոփիչ ասուլիսում ունեցած խօսքից կարծես թէ երեւում էր, որ Ալիեւը հասկացել է Հայաստանի տարածքով միջանցքի բացման անհնարինութիւնը: Պաքուի առաջնորդն իր խօսքում օգտագործեց տրանսպորտային երակներ ձեւակերպումը:

Փոխ վարչապետերի եռակողմ բանակցութիւնները վերսկսուելու են մի քանի օրից, եւ կարելի է ակնկալել, որ Ատրպէյճանը կը հրաժարուի իր ծայրայեղ դիրքորոշումից, քանի որ այդ բանակցութիւնների արդիւնքների նսպասում են երեք երկրի ղեկավարները, որոնց հերթական հանդիպումը նախանշուած է առաջիկայում՝ հենց փոխ վարչապետների գլխավորած աշխատանքային խմբի քննարկումները:

Սոչիի Եւ Սթրախովի Խանգարող Հանգամանքները

ՅԱԿՈՒ ԲԱՂԱՆԵԱՆ

ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահները յայտարարութիւն են տարածել Սթրախովում Հայաստանի եւ Ատրպէյճանի նախարարների հանդիպման հետ կապուած, աւելի կոնկրետ՝ հանդիպում չկազմակերպելու հետ կապուած: Նրանք այդ առիթով յայտնում են իրենց ավստասանքը, որ չի յաջողուել կազմակերպել այդ հանդիպումը: Ինչպէս յայտնի է, մինչ Սթրախովում ԵԱՀԿ նախարարական համաժողովը կար խօսակցութիւն, որ այնտեղ հնարաւոր է Հայաստանի եւ Ատրպէյճանի արտգործնախարարների նոր հանդիպում: Աւելին, նաեւ պաշտօնապէս նշուած էր, որ դա հնարաւոր է: Սակայն, հանդիպում չեղաւ եւ Հայաստանի ու Ատրպէյճանի արտգործնախարարները առանձին-առանձին հանդիպել են միայն երեք համանախագահների հետ: Ինչո՞ւ չի ստացուել հանդիպումը կամ ով է հրաժարուել, պարզ չէ: Համանախագահները ինչպէս միշտ չեն կոնկրետանում եւ չեն յայտնում որեւէ հարցում պատասխանատու կողմի:

Հայաստաննու Ատրպէյճանն էլ միմեանց են մեղադրում ոչ կառուցողական լինելու համար, եւ սա էլ յայտնի իրողութիւն է: Այդուհանդերձ, ակնառու է, որ կայ ինդիք, ընդ որում խնդիրը կայ Սոչիի եռակողմ հանդիպումից յետոյ, որովհետեւ ոչ միայն չի ստացուել արտգործնախարարների հանդիպում կազմակերպել Սթրախովում, այլ նաեւ չի ստացուել Սոչիի եռակողմ հանդիպմանը ՌԴ նախագահ փութինի ազդարարած փոխ վարչապետերի յայտարարութիւնը, որ Մոսկուայում հանդիպումից յետոյ պէտք է լիներ հարող ուղիների ապաշրջափակման թեմայով որոշումների մասին: Փոխ վարչապետները հանդիպեցին, սակայն չյայտարարեցին ոչինչ, բացի այն, որ կարիք կայ նոր հանդիպումների: Այդ ընթացքում իհարկէ Ատրպէյճանը Հայաստանին վերադարձրեց տասը գերիները, որոնք գերեվարուել էին Նոյեմբերի 16-ի մարտական գործողութիւնների օրը: Այդ հանգամանքը թերեւս հիմք է տալիս դիտարկելու, որ թէ Սոչիից յետոյ, թէ Սթրախովի հանդիպման չկախանալու հետ կապուած խնդիրները աղբիւրն Ատրպէյճանն է եւ Պաքուն գերիների հարցում վերադարձի քայլին գնացել է թերեւս իր այսպէս ասած ապակառուցողական պահուածքը փոքր ինչ բալանասաւորելու համար:

Իհարկէ սա միայն դիտարկում է, որովհետեւ պարզ չեն միշտ ք հանգամանքներ, սակայն բո-

լոր դէպքերում հազիւ թէ Ատրպէյճանը գնար գերիների վերադարձի որոշման, եթէ Սոչիից յետոյ մոսկովեան հանդիպման, ինչպէս նաեւ Սթրախովում հանդիպում չկախանալու պատասխանատուն լինէր հայկական կողմը: Համանախագահները պատրաստակամութիւն են յայտնում հնարաւորութեան դէպքում կազմակերպել արտգործնախարարների նոր հանդիպում եւ շարունակել Նիւ Եորքի եւ Փարիզի հանդիպումների ընթացքում ծաւալուած քննարկումները, երբ թոյլ տան հանգամանքները: Նկատի ունե՞ն կոնկրետ հանգամանքներ, թէ ոչ, պարզ չէ, սակայն այստեղ գուցէ ուշադրութեան է արժանի մէկ այլ իրողութիւն: ՌԴ արտգործնախարար Լաւրովը յայտարարեց, որ Սթրախովում եղել է Մինսկի խմբի երեք համանախագահ երկրների արտգործնախարարների մակարդակով համատեղ յայտարարութիւն, որում նշուած է նաեւ ՌԴ միջնորդական դերի մասին: Սակայն, ուշագրաւ է այն, որ առ այսօր այդ յայտարարութիւնը դեռեւս հանրայնացուած չէ, ինչը առաջնացնում է հարցեր, թէ արդե՞ք խնդիրներն առաջացնող հանգամանքները համանախագահների շրջանակում չեն: Ընդ որում, այստեղ հետաքրքիր է նաեւ այն, թէ առկայ իրավիճակը ինչ ազդեցութիւն կը թողնի Պրիւսելում Դեկտեմբերի 15-ին սպասուող, ազդարարուած Փաշինեան-Ալիեւ հանդիպման վրայ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Պաշտօնական Պաքուի նման պահուածքն առաջին հերթին Արցախի խաղաղ բնակչութեանը վախի մթնոլորտում պահելու քաղաքականութեան շրջանակներում

Եւ ստացուած է, որ Ատրպէյճանցի զինուորն ազատ է համակարգային խնդրի շրջանակներում պարբերաբար կրակելու հայկական գիւղերի ուղղութեամբ:

Պաշտօնական Պաքուի նման պահուածքն առաջին հերթին Արցախի խաղաղ բնակչութեանը վախի մթնոլորտում պահելու քաղաքականութեան շրջանակներում է: Արդէն մի քանի սերունդ պատերազմ տեսած արցախցուն դժուար է նման կրակոցներով վախեցնել: Այս պարզ ճշմարտութիւնը հասու է Հայաստանի առաջնորդին, քանի որ արցախեան նախորդ պատերազմներում նա տեսել է, թէ ինչպէս մի քանի արկի պայթիւնից յետոյ ողջ արեւմտեան Ատրպէյճանը փախչում է դէպի Պաքու:

Ատրպէյճանի քաղաքական վերնախաւը պէտք է վաղուց հասկանար այդ պարզ ճշմարտութիւնը, բայց յայտնի ընտանի կենդանու յամառութեամբ շարունակում է դիմացինին իր «արշինով չափել»: Միւս կողմից՝ հրադադարների խախտման նման դէպքերը Պաքուի համար դարձել են քաղաքական խոստովի տարր: Վերջինս այդ կրակոցներով արտայայտում է իր դժգոհութիւնն Արցախի շուրջ բանակցութիւններում իրեն ոչ ձեռնտու գարգացումների վերաբերեալ: Պարզուած է, որ այդ տրամաբանութեան համաձայն՝ վերջին կրակոցների համար էական նախադրեալներ կային: Կարմիր շուկայի հարեւանութեամբ հերթական կրակոցները հնչեւն այն ժամանակ, երբ պարզ է դարձել, որ

ների արդիւնքների շուրջ: Պարզ է, որ յետպատերազմյան կարգաւորումներով որոշակի հանգրուանի հասնելու այս քայլերը պէտք է արդիւնք տան մինչեւ պրիւսելեան հանդիպումը, հետեւաբար, Ատրպէյճանը ստիպուած կը լինի մեղմել իր դիրքորոշումը, հակառակ դէպքում վատ դրութեան մէջ կը դնի ՌԴ-ին, որը միջնորդական ահուելի ջանքեր է գործադրում Արցախի շուրջ իրավիճակը կայուն պահելու ուղղութեամբ: Իսկ քաղաքական բանակցութիւնների իւրաքանչիւր փուլից առաջ իրավիճակի նման ապակայունացումներով իր համար բացարձակ ձեռնտու որոշումների հասնելու մարտավարութիւնը չի աշխատել ու չի աշխատելու, եւ դրանք ընդամենը որպէս եռակողմ յայտարարութեան խախտման հերթական դէպքեր կ'արձանագրուեն՝ Ատրպէյճանի անփոփոխ հեղինակութեամբ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104 (626) 797-7680

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

ՔՊ-ը Յաղթած է 36 Համայնքներին 25-ին Մեջ, Պարտուած է Մասիսի, Արովեանի Եւ Վանաձորի Մեջ



Դեկտեմբեր 5-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմիններու (ՏԻՄ) ընտրութիւններուն «Քաղաքացիական պայմանագիր»-ը (ՔՊ) յաղթած է 36 համայնքներէն մեծ մասին մէջ, ինչպէս կուսակցութիւնէն Ազգային ժողովի պատգամաւոր՝ Վահագն Ալեքսանեան գրած է Դիմատետրի էջով՝ նախնական տուեալներով 25-ին մէջ:

Միեւնոյն ժամանակ, իշխանական կուսակցութիւնը պարտուած է քանի մը խոշոր քաղաքներու մէջ:

Մասիսի գործող քաղաքապետ, քրէական գործով մեղադրեալ Դաւիթ Համբարձումեանի գլխաւորած դաշինքը յաղթած է ապահովելով Համբարձումեանի հետագայ պաշտօնավարումը:

Արովեանի մէջ ամենաշատ ձայներ՝ շուրջ 46 տոկոս, ստացած է «Բարգաւաճ Հայաստան»-ը, որու թեկնածու՝ Գագիկ Մառուկեանի թիկնազօրի նախկին պետ, Ազգային ժողովի նախկին պատգամաւոր՝ Էդուարդ Բաբայանին անհրաժեշտ են նաեւ այլ ուժերու քուէներ քաղաքապետ ընտրուելու համար: 2019-ին Բաբայան դատաւարտուեցաւ 3 տարի 6 ամիս ազատազրկման եւ համաներմամբ ազատ արձակուեցաւ:

Վանաձորի մէջ յաղթած է նախկին քաղաքապետ Մամիկոն

Ասլանեանի գլխաւորած դաշինքը՝ ստանալով քուէներու մօտ 38,6 տոկոսը, ինչ որ կը նշանակէ, որ առանց այլ ուժի ձայներու Ասլանեան չ'ընտրուիր քաղաքապետ: Անցեալ ընտրութիւններուն Ասլանեան կը գլխաւորէր Հանրապետականի ցուցակը:

«Քաղաքացիական պայմանագիր»-ը, որու ցուցակի առաջին համարը Լուիի մարզպետ՝ Արամ Խաչատրեանն է, ստացած է ձայներու մօտ 24,7 տոկոսը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան այսօր դիմատետրեան իր էջով անդրադարձած է ՏԻՄ ընտրութիւններուն՝ մասնաւորապէս գրելով՝ ՏԻՄ ընտրութիւններու այս որակը, «երբ քաղաքացին Տէր է եւ Որոշող, մեր վաղեմի երազանքն է՝ ի կատար ածուած»:

«Գիտեմ եւ հասկանում եմ տեսակէտը, թէ աւելի լաւ է ընտրութիւնները կեղծուէին, բայց անվտանգութեան աւելի բարձր մակարդակ ունենայինք, բայց իմ համոզմունքը եղել է, կայ եւ կը լինի, որ հենց ընտրութիւնների կեղծման երկարամեայ գործարկումն է քայքայել 90-ականների սկզբին ձեւաւորուող պետական դիմակայունութեան համակարգը եւ շղթայական հակազդեցութիւններով յանգեցրել անվտանգային աղետների», - գրած է վարչապետը:

Մէկ Տարուայ Մեջ Հայաստանի Պետական Պարտքը Աւելցած է 1.24 Միլիարդ Տոլարով

Անցեալ տարեվերջի համեմատ Հայաստանի պետական պարտքը աճած է 1 միլիարդ 240.73 միլիոն տոլարով, իսկ արտաքին պարտքը՝ 701.342 միլիոն տոլարով: Այս տարուայ Հոկտեմբեր 31-ի դրութեամբ Հայաստանի պետական պարտքը կազմած է 9 թրիլիոն 209.216 միլիոն տոլար: Ինչպէս տեղեկացուցած է ՀՀ վիճակագրական կոմիտէն, Սեպտեմբերի համեմատ պետական պարտքը աւելցած է 171.107 միլիոն տոլարով: Իսկ անցեալ տարուայ Դեկտեմբերի համեմատ Հոկտեմբեր 31-ի դրութեամբ պետական պարտքը աւելցած է 1 իլիարդ 240.73 միլիոն տոլարով:



Հայաստանի արտաքին պարտքը Հոկտեմբեր 31-ի դրութեամբ կազմած է 6 միլիարդ 706.786 միլիոն տոլար, Սեպտեմբերի համեմատ աճած է 41.218 միլիոն տոլարով: Իսկ անցեալ տարեվերջի համեմատ արտաքին պարտքը Հոկտեմբերի վերջի դրութեամբ աճած է 701.342 միլիոն տոլարով: Արտաքին պարտքէն 6 միլիարդ 232.502 միլիոն տոլարը ՀՀ կառավարութեան պարտքն է:

Դարձեալ Տեղի Ունեցած է Ծեծկռտուք Ազգային ժողովէն Ներս

Դեկտեմբեր 7-ին, Խորհրդարանէն ներս միջադէպ տեղի ունեցած է «Հայաստան» դաշինքի փորձագէտներու մասնակցութեամբ: Civic.am-ի տեղեկութիւններով՝ միջադէպը հրահրած են դաշնակցականները, որոնք ալ միջադէպի հետեւանքով ծեծ կերած են:

Մասնաւորապէս ծեծուածներէն է ՀՅԴ-ական Գերասիմ Վարդանեան, որ կ'անցնի ԱԺ նախկին նախագահ՝ Արարատ Միրզոյեանի դէմ մահափորձի, ինչպէս նաեւ «Ազատութիւն» ռատիոկայանի վրայ յարձակման գործերով:

Civic.am-ի հետ զրոյցի ընթացքին Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան պատգամաւոր՝ Վահագն Ալեքսանեան անդրադառնալով ԱԺ-ի մէջ տեղի ունեցած ծեծկռտուքին, յայտնեց, որ միջադէպը ծագած է իշխանական եւ ընդդիմադիր կողմերու 2 օգնականներուն միջեւ: «Հետագայում, երբ արդէն պատգամաւորները դուրս են եկել միջանցք, այնտեղ արդէն իրավիճակը թէժ-ժացած է եղել», - ըսաւ պատգամաւորը:

Ըստ Ալեքսանեանին՝ պատգամաւորները դուրս ելած են միջանցք եւ տեսած, որ «Հայաստան» դաշինքի պատգամաւորներու օգնականները գոռալով կը հայհոյեն Ազգային ժողովի միջանցքներուն մէջ. «Տեսել ենք, որ նրանց մէջ էին նաեւ մարդիկ, ովքեր ըստ մամուլի՝ Նոյեմբերի 9-ին ներգրաւուած են եղել Արարատ Միրզոյեանի դէմ



«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան պատգամաւոր՝ Վահագն Ալեքսանեան

մահափորձի եւ այլ խուլիզանութիւնների մէջ», - աւելցուց Ալեքսանեան:

ՀՀ գլխաւոր դատախազութեան յայտնած են, որ կ'ուսումնասիրուին ԱԺ-էն ներս այս ծեծկռտուքի վերաբերեալ հրապարակումները:

«ՀՀ գլխաւոր դատախազութիւնում արձանագրուել են տեղի ունեցած միջադէպի մասին հրապարակումները, ուսումնասիրութիւն է նախաձեռնուել, հետագայ ընթացքի մասին կը տեղեկացնենք», - Civic.am-ին յայտնած էր ՀՀ գլխաւոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամեան:

Դատախազութիւնը Դիմած է Դատարան՝ Վլատիմիր Գասպարեանի Ու Անոր Ընտանիքի Գոյքի Բռնագանձման Հայցով

Գլխաւոր դատախազութիւնը Դեկտեմբեր 2-ին դիմած է դատարան՝ Հայաստանի նախկին ոստիկանապետ՝ Վլատիմիր Գասպարեանի ու անոր ընտանիքի անդամներու ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման պահանջով: Այդ մասին կը տեղեկանանք «Դատախազ» տեղեկատուական հարթակէն:

Այս գործով կ'անցնին Վլատիմիր Գասպարեան, անոր կինը՝ Սոսաննա Գասպարեան, մայրը՝ Անժելա Գասպարեան, որդին ու դուստրը՝ Անկէլինա եւ Վլատիմիր Գասպարեաններ, զորանքը՝ Հեղուշ Գալստեան: Հայցադիմումը նախ ներկայացուած է Նոյեմբեր 19-ին, ապա թերութիւններու պատճառով վերադարձուած, իսկ Դեկտեմբեր 2-ին նորէն ներկայացուած դատարան: Հայցուորը ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վարչութեան դատախազ՝ Տիգրան Դաւթեանն է: Յունիսին դատախազութիւնը Գասպարեանի ու անոր ընտանիքի գոյքերու հետ կապուած ուսումնասիրութիւն ըրած էր, ապա վերջիններս հրաւիրել՝ բացատրութիւններ ներկայացնելու: Յունիս 1-ին յայտնի դարձաւ, որ Գասպարեանին պատկանող գոյքի վրայ կալանք դրուած է:

Գլխաւոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամեան «Լուրեր»-ու հետ զրոյցի ընթացքին ըսաւ, որ դատարանը արդէն վարչութիւն ընդունած է գործը: Դատախազութիւնը, միեւնոյն ժամանակ, դեռ չի մանրամասներ, թէ գործով



Հայաստանի նախկին ոստիկանապետ՝ Վլատիմիր Գասպարեան

Գասպարեանին ու անոր ընտանիքին պատկանող ո՞ր գոյքերը բռնագանձման ենթակայ են: «Դատախազութիւնը դեռեւս տեղեկատուութիւն չի տրամադրում այդ անձանց գոյքի վերաբերեալ, առաջիկայում հնարաւոր է հրապարակենք», - ըսաւ Աբրահամեան:

Մինչ Գասպարեաններու գոյքի բռնագանձումը, Գլխաւոր դատախազութիւնը դատարան դիմած էր մէկ այլ հայցով՝ ԱԱԾ նախկին պաշտօնեայ, գնդապետ Սերոբ Յարութիւնեանէն ու անոր ընտանիքէն մօտաւոր 485 միլիոն դրամի գոյք բռնագանձելու համար՝ ներդրեալ բնակարան Հիւսիսային պողոտայի վրայ, ինքնաշարժներու կայանատեղիներ ու ինքնաշարժներ:

ԼՈՒՐԵՐ

Փոխվարչապետներու Հանդիպման Ընթացքին Չէ Յաջողած Համաձայնութիւններ Չեւակերպել

«Չի չաջողուած համաձայնութիւններ ձեւակերպել», - անդրադառնալով փոխվարչապետներու Մոսկուայի մէջ տեղի ունեցած հանդիպման՝ «Ազատութիւն»-ի էթերով յայտարարած է Անվտանգութեան խորհուրդի քարտուղար՝ Արմէն Գրիգորեան:

Ինչպէս «Ազատութիւն»-ի հաղորդած են, առաջիկայ օրերուն փոխվարչապետներու՝ Նոյեմբեր 1-ի ընդհատուած նիստը պիտի շարունակուի: «Փոխվարչապետերի համանախագահութեամբ գործող եռակողմ աշխատանքային խմբի Դեկտեմբերի 1-ին կայացած հերթական նիստը կը շարունակուի մօտակա օրերին: Դրա արդիւնքների մասին կարող ենք խօսել նիստի աւարտից յետոյ միայն», - մասնաւորապէս տեղեկացուցած են փոխվարչապետի գրասենեակէն:

Սոչիի մէջ Փաշինեան-Ալիեւ-Փուլին եռակողմ հանդիպումէն յետոյ Ատրպէյճանի նախագահը հրապարակային յայտարարութիւններով «Զանգեզուրի միջանցք»-ի մասին ոչ մէկ բառ ըսաւ, բայց մէկ օր անց անցաւ նոյն հռետորաբանութեան, նոյնիսկ պնդեց, որ ծրագիրը իրականութիւն կը դառնայ:

Հայաստանի անվտանգութեան խորհուրդի քարտուղարը պնդած է, որ եթէ ըլլայ ապաշրջափակում, կ'ըլլայ իրարու ճանապարհներու ինքնիշխանութեան տրամաբանութեամբ. - «Մենք պատրաստ ենք ապաշրջափակմանը: Պատրաստ ենք նաեւ քննարկել ուղիները, որոնք հնարաւոր է բացել: Ժանապարհային այն ուղիները, որը Ատրպէյճանը մեզ է տրամադրելու, որպէսզի Ատրպէյճանի տարածքը օգտագործենք վարչական տարածքի հարեւանութեամբ տեղակայուած չէզոք գոտի եւ բնութիւնը գործադրել նոյն քաղաքի բնակիչ, ԱՀ քաղաքացի, անասնապահութեամբ զբաղող, 1956թ. ծնուած Սէյրան Սարգսեանի նկատմամբ, որից յետոյ նրան տեղափոխել են ատրպէյճանական յենակէտ, որտեղ Ս. Սարգսեանին դիտաւորութեամբ ապօրինաբար կեանքից զրկել են», - ըստուած է տարածուած հաղորդագրութեամբ:

Ատրպէյճանի Ձինուորականները Սպաննած Են 65-Ամեայ Արցախցիին

Ատրպէյճանի զինուորականները բռնութիւն գործադրած են ու սպաննած Արցախի 65-ամեայ բնակիչը, յայտնած է Արցախի Ազգային անվտանգութեան ծառայութիւնը:

Արցախի ԱԱԾ-ն աւելի վաղ յայտնած էր, որ Մարտունիի շրջանի ճարտար քաղաքի 65-ամեայ բնակիչը մոլորուելու հետեւանքով յայտնուած է Ատրպէյճանի զինուորած ուժերու վերահսկողութեան տակ:

«Այսօր ժամը 13:00-ի սահմաններում Ատրպէյճանի զինուորականները մուտք են գործել ԱՀ Մարտունու շրջանի ճարտար քաղաքի վարչական տարածքի հարեւանութեամբ տեղակայուած չէզոք գոտի եւ բնութիւնը գործադրել նոյն քաղաքի բնակիչ, ԱՀ քաղաքացի, անասնապահութեամբ զբաղող, 1956թ. ծնուած Սէյրան Սարգսեանի նկատմամբ, որից յետոյ նրան տեղափոխել են ատրպէյճանական յենակէտ, որտեղ Ս. Սարգսեանին դիտաւորութեամբ ապօրինաբար կեանքից զրկել են», - ըստուած է տարածուած հաղորդագրութեամբ:

Ատրպէյճան Հայկական Կողմին Փոխանցած Է 10 Հայազգի Ձինձառայող

Դեկտեմբեր 4-ին Ատրպէյճանի հայկական կողմին փոխանցած է 10 հայազգի զինձառայող, այս մասին յայտնած են ատրպէյճանական լրատվամիջոցները վկայակոչելով Ազգային անվտանգութեան ծառայութեան պաշտօնական հաղորդագրութիւնը:

Գերատեսչութիւնը նշած է, որ հայկական կողմին փոխանցուած հայ զինձառայողները «ձերբակալուել էին 2021 թուականի նոյեմբերի 16-ին՝ պետական սահմանի Քելբաջարի ուղղութեամբ հայկական զինուորած ուժերի սաղ-



Անվտանգութեան խորհուրդի քարտուղար՝ Արմէն Գրիգորեան

ծենք այլ երկրների հետ կապուելու համար, եւ նաեւ այն ճանապարհները, որով Ատրպէյճանը հնարաւորութիւն է ստանալու նաեւ Նախիջեւանի հետ կապ հաստատելու համար: Մենք շարունակում ենք պնդել, որ պէտք է ամբողջովին մեր քննարկումները մնան Նոյեմբերի 9-ի յայտարարութեան, Յունուարի 11-ի, ինչպէս նաեւ Նոյեմբերի 26-ի Սոչիի յայտարարութեան [շրջանակներում], որտեղ որեւէ խօսք միջանցքի մասին չկայ եւ չի էլ կարող լինել»:

Հարցին, թէ այդ պարագային ինչու համաձայնութեան չեն գար, Գրիգորեան պատասխաստանեց. - «Ինչպէս միշտ, Հայաստանը այս առումով կառուցողական է եւ պատրաստ է քննարկումները առաջ տանել: Կարծում եմ, որ Ատրպէյճանը չի կարողանում դրսեւորել քաղաքական այնպիսի կայք, որը հնարաւորութիւն կու տայ Սոչիում ձեռք բերուած պայմանաւորութեան ձեւակերպումները առաջ տանել»:

Ըստ Արցախի ԱԱԾ-ին՝ Ղէպքի Հանգամանքները Արձանագրած Են Եւ Արցախեան Կողմը Տեղադրուած Են Տեսախցիկները:

Ըստ Արցախի ԱԱԾ-ին՝ Ղէպքի հանգամանքները արձանագրած են Եւ Արցախեան կողմը տեղադրուած են տեսախցիկները:

«Ըստ Արցախի ԱԱԾ-ին՝ Ղէպքի հանգամանքները արձանագրած են Եւ Արցախեան կողմը տեղադրուած են տեսախցիկները»:

Րանքը ճնշելու Ժամանակ»:

Հայկական կողմը Ատրպէյճանին փոխանցած է «ականապատ դաշտերու եւ բռնագրաւուածութեանէն ազատագրուած Ատրպէյճանի Հանրապետութեան այլ տարածքներու քարտէզները»: Այս մասին յայտնած են ատրպէյճանական լրատվամիջոցները վկայակոչելով՝ Ատրպէյճանի Անվտանգութեան ծառայութեան հաղորդագրութիւնը: Գերատեսչութիւնը նշած է, որ քարտէզները ատրպէյճանական կողմին փոխանցուած են «բանակցութիւններու արդիւնքով»:

ԱՄՆ-ի Պետական Քարտուղարը Հանդիպում Ունեցած Է Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարի Հետ



Արարատ Միրզոյեան եւ Թոմ Գլինքըն Սթոքհոլմի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Հայաստանի Արտաքին գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեան Սթոքհոլմի մէջ հանդիպած է ԱՄՆ-ի պետական քարտուղար՝ Թոմ Գլինքընի հետ:

«Կարեւորուեց Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացի լիարժէք վերսկսումը՝ ԵԱՀԿ Մինսքի խմբի մանտաթով», - Թոմ Գլինքըն մէջ գրած է Արարատ Միրզոյեան՝ աւելցնելով, որ հանդիպումը անցած է կառուցողական մթնոլորտի մէջ:

ԱԳՆ հաղորդագրութեան համաձայն՝ Միրզոյեան Գլինքընին ներկայացուցած է տարածաշրջանի սահմանային վերջին լարուածութեան հետեւանքով ստեղծուած իրավիճակը: Անոնք կարեւորած են իրավիճակի ապամազլցման ուղղուած քայլերու իրագործումը:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան՝ պաշտօնականները շեշտած են մարդասիրական հարցերու լուծման անհրաժեշտութիւնը, անոնց կարգին՝ ռազմագերիներու, պատանդներու եւ այլ պահուող անձերու վերադարձը, հաղորդած է հայկական կողմը:

ԱՄՆ-ի պետական քարտուղարը հանդիպած է նաեւ Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարին հետ: «Կողմերը քննարկած են երկկողմանի յարաբերութիւններու զարգացումը, անոնց կարգին՝ տնտեսութեան, ռազմապետութեան եւ անվտանգութեան ոլորտներուն մէջ», - յայտարարած է Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարութիւնը:

Երեւան ԶՅ Ինքնիշխանութեան Նկատմամբ

Շարունակուած էջ 1-էն

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը յղում ըրած է մինչ այդ ստորագրուած եռակողմ երեք փաստաթուղթերուն ու շեշտած, որ անոնց մէջ Հայաստանը Ատրպէյճանին «միջանցք, միջանցքային տրամաբանութեան ուղի տրամադրելու որեւէ պարտաւորութիւն, պայման, պայմանաւորութեան չունի»:

«Հայաստանի Հանրապետութիւնն անվտանգային ոլորտում իր հիմնական գործընկեր Ռուսաստանի Դաշնութեան, Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան, ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի, ԵԱՀԿ Մինսքի խմբի

Ըստ պաշտօնական Պաքուին՝ Պաշտօնավար պետական քարտուղար Գլինքընին ներկայացուցած է իրավիճակը Հարաւային Կովկասի անցեալ տարուայ պատերազմէն ու հրադարձն յետոյ, ինչպէս նաեւ հայ-ատրպէյճանական սահմանի վերջին լարուածութեան պատճառները:

Միացեալ Նահանգները ողջունած է ուղիղ երկխօսութեան վերականգնումը Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ: Այդ մասին Դեկտեմբեր 2-ին յայտարարած է պետական քարտուղար՝ Էնթոնի Գլինքընը Սթոքհոլմի մէջ ԵԱՀԿ նախարարական խորհուրդի նիստին:

«Կը յորդորենք երկու կողմերը առաջընթացի հասնիլ մարդասիրական հարցերուն մէջ, անոնց կարգին՝ գերիներու, ականագերծման, անհետ կորածներու, մարդու իրաւունքներու ենթադրեալ խախտումներու հետաքննութեան ուղղութեամբ», - յայտարարած է Գլինքընը:

Պետական քարտուղարը կոչ ըրած է Պաքուին եւ Երեւանին նաեւ կարգաւորել մինչ օրս չլուծուած միւս հարցերը, մասնաւորապէս, սկսելու սահմանի սահմանազատման եւ սահմանագծման, վերականգնելու տնտեսական ու փոխադրային կապերը, ինչպէս նաեւ «շարունակելու փոխգործակցութիւնը ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու հետ՝ դարաբաղեան խնդրի խաղաղ կարգաւորման համար»:

Համանախագահող երկրների եւ ողջ միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրում է այն փաստի վրայ, որ պաշտօնական Պաքուն շարունակում է ռազմաշունչ յայտարարութիւններով ուժի կիրառման յստակ սպառնալիքներ հնչեցնել Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան նկատմամբ՝ խախտելով միջազգային իրաւունքի հիմնարար սկզբունքները, այդ թւում՝ ՄԱԿ-ի կանոնադրութիւնը եւ վտանգելով տարածաշրջանային եւ համաշխարհային անվտանգութիւնը», - յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը:

Ուրուկուէյի Կառավարութիւնը 70 Հազար Տոլար Կը Յատկացնէ «Հնչակեան Տան» Արահի Շինութեան



Պաշտօնական հանդիսութեան ընկացքին ելոյթ կ'ունենայ Ուրուկուէյի Շինարարութեան նախարար՝ ժոզէ Լուի Ֆալչիո

ՄԴՀԿ Ուրուկուէյի կեդրոնին մէջ տեղի ունեցած հանդիսութեան ընթացքին, ստորագրուեցաւ փոխհամապորձակցութեան պայմանագիր Ուրուկուէյի Շինարարութեան եւ Փոխադրութեան նախարարութեան եւ «Հնչակեան Հայկական Տան» կազմակերպութեան միջեւ, կուսակցութեան կալուածէն ներս նոր սրահի շինութեան համար:

Ըստ ստորագրուած պայմանագրին՝ Ուրուկուէյի պետութիւնը 3 միլիոն ուրուկուէյական բեսոյի (մօտ 70 հազար ԱՄՆ տոլար) ներդրում պիտի կատարէ սրահի մը շինարարութիւնը իրականացնելու համար եւ Հնչակեան կառուցը շարունակելով եւ ընդլայնելով իր հասարակական գործունէութիւնը պէտք է տարուայ մէջ սրահը ձրի տրամադրէ ուրուկուէյցի կարիքաւոր հասարակական կազմակերպութիւններուն իրենց ձեռնարկներուն համար:

Հանդիսութեան ներկայ էին Ուրուկուէյի Փոխադրութեան եւ Շինարարութեան նախարար՝ ժոզէ Լուի Ֆալչիո, փոխնախարար՝ ժոզէ Օլայջօլա, Հայաստանի պատուաւոր հիւպատոս՝ Ալիսիա Աբրահամեան, պետական երեսփոխան՝ Փետրօ Ժիստոնեան եւ այլ պաշտօնեաներ:

Իր խօսքին մէջ նախարար Ֆալչիօ ըսաւ, որ 1926-ին հիմնադրուած Հնչակեան կառուցը բաւարարած է պետութեան պահանջները եւ ատոր համար կը ստանայ այս ներդրումը զարգացնելու համար իր գործունէութիւնը: Այս ծրագրով Ուրուկուէյի պետութիւնը իր գնահատանքը կը յայտնէ հայ համայնքի հանդէպ եւ այս ձեւով կը հզօրանան հայ ուրուկուէյական բարեկամական յարաբերութիւնները:

Ուրուկուէյի ՄԴՀԿ վարիչ Մարմնի ատենապետ՝ ընկ. Դանիէլ Մանուէլեան իր երախտագիտութիւնը յայտնեց Ուրուկուէյի պետութեան այս որոշման կապակցութեամբ եւ ըսաւ, որ սա մեծ յարգանք է Հայոց Յեղասպանութենէն վերապրած այն ընկերներուն, որոնք հիմքերը դրին 1926-ին Հնչակեան մասնաճիւղին եւ մեծ պարտաւորութիւններ կը ստեղծէ ներկայ սերունդին ազգային եւ հասարակական ծառայութիւնները զարգացնելու նպատակով:

Թուրքիոյ Սէջ Հայկական Կրօնական Ժառանգութիւնը Կը Գտնուի Սպառնալիքի Տակ, Կ'ըսէ Ամերիկեան Զեկոյցը

ԱՄՆ-ի «Կրօնական ազատութիւններու միջազգային յանձնաժողով»-ը իր կողմէն պատրաստուած գեկոյցով Թուրքիոյ մեղադրած է կրօնական փոքրամասնութիւններու շուրջ թշնամական քաղաքական միջավայր ստեղծելու մէջ:

Այս մասին, ինչպէս հաղորդած է «Արմէնփրէս»-ը, յայտնած է թրքական yeniakit.com.tr-ը:

Զեկոյցը նշած է, որ Թուրքիոյ կառավարութիւնը կը հանդուրժէ երկրի, ինչպէս իսլամական, այնպէս ալ ոչ իսլամական կրօնական փոքրամասնութիւններու դէմ ուղղուած ատելութեան խօսքն ու բռնութեան արթնումը, եւ ընդգծուած, որ յատկապէս Թուրքիոյ հայ համայնքի եւ այլոց ահաբեկման ենթարկելու նոր ձեւեր ի յայտ եկած են:

Շեշտուած է, որ հայկական կրօնական ժառանգութիւնը վտանգի տակ է եւ ընդգծուած է, որ թրքական կառավարութիւնը շարունակաբար միջամտած է կրօնական փոքրամասնութիւններու ներ-

քին գործերուն: «2013 թուականէն ի վեր Թուրքիոյ կառավարութիւնը կը խոչընդոտէ կրօնական փոքրամասնութիւններու հիմնադրամներու խորհուրդներու նոր անդամներու ընտրութեան գործընթացը: Այդ գործելաոճը, աստիճանաբար, կը նուազեցնէ անոնց (իմա՝ խորհուրդի անդամներու) թիւը մահուան եւ հիւանդութեան պատճառով, կը մեծցնէ առօրեայ աշխատանքային դժուարութիւնները, ինչպէս նաեւ՝ կը վնասէ այնպիսի համայնքներուն, ինչպիսին է, օրինակ, Հայ Առաքելական Եկեղեցին: Բացի այդ COVID-19 համավարակը եւ Լեւոնային Ղարաբաղի պատերազմը նպաստած են հակահայկական դաւաճողութիւններուն եւ բողոքի ցոյցերուն», - ըսուած է զեկոյցով:

Զեկոյցով ընդգծուած է նաեւ Թուրքիոյ մէջ հակասեմականութեան աճը եւ այլեւի համայնքի նկատմամբ կիրառուող սահմանափակումները:

Հայաստան Սկսած Է Արտադրել «Սփուլսիք Լայթ» Պատուաստը

Դեկտեմբեր 6-ին Հայաստանի դեղարդիւնաբերութեան առաջատար «Լիփվոյ» ընկերութենէն ներս կայացած է Հայաստանի Հանրապետութեան մէջ «Սփուլսիք Լայթ» պատուաստի արտադրութեան մեկնարկին նուիրուած մամլոյ ասուլիսը:

Ասուլիսի բանախօսներն էին՝ ՀՀ Տնտեսութեան նախարար՝ Վահան Քերոբեան, ՀՀ առողջապահութեան նախարար՝ Անահիտ Աւանեսեան եւ «Լիփվոյ» ՓԲԸ գլխաւոր տնօրէն Սերկէյ Մաթեոսեան: Նախքան ասուլիսը, նախարարները ընկերութեան տնօրէնին հետ միասին շրջաց կատարած են եւ ծանօթացած ընկերութեան արտադրական գործընթացներուն ու հզօրութիւններուն:

Ասուլիսի մեկնարկին Տնտեսութեան նախարար Վահան Քերոբեան նշած էր «Մենք բաւականին երկար ճանապարհ ենք անցել դեղարդիւնաբերութեան ոլորտում որակի ամենաբարձր չափանիշներին համապատասխանող «Լիփվոյ» հայկական ընկերութեան եւ մեր ուսուցիչ գործընկերներին հետ, որպէսզի այսօր ունենանք Հայաստանում արտադրուած, որակի բոլոր չափանիշներին համապատասխանող պատրաստի արտադրանք, որը պատրաստ է մտնել շուկայ: Այժմ նաեւ բանակցութիւններ են ընթանում արտահանման հնարաւոր ուղղութիւններին յատկացման շուրջ»: Ան աւելցուցած է, որ անցեալ շաբաթ կառավարութեան հնգամեայ ծրագրով հրապարակուած է արդիւնաբերութեան հինգ գերակայ ոլորտներու ցանկը, որոնցում էլ մէջը դեղագործութիւնն է: Ան ընդգծած է, որ նախարարութեան գործունէութեան կիզակէտը պիտի ըլլայ դեղագործական ոլորտի զար-



ՀՀ առողջապահութեան նախարար՝ Անահիտ Աւանեսեան

գացումը՝ նման դեղագործական ընկերութիւններու հետ խոր համագործակցութեան շնորհիւ:

Առողջապահութեան նախարար՝ Անահիտ Աւանեսեան իր խօսքին մէջ նշած էր ««Սփուլսիք» պատուաստանիւթի երկու դեղաչափը ստանալուց 6 ամիս անց քաղաքացիները կը ստանան «Սփուլսիք Լայթ» պատուաստանիւթի խթանիչ (պուսթըր) դեղաչափը: Ինչպէս միւս պատուաստանիւթերի դէպքում, այնպէս ալ այս դէպքում, պետութիւնը կը գնի պատուաստանիւթը, եւ քաղաքացիները դա կը ստանան անվճար: Առաջիկայ, շատ մօտ ժամկետներում պետութիւնը կ'իրականացնի գնման գործընթացները, եւ այն առկայ կը լինի փոլիբրիկին քանակներում: Այս պատուաստանիւթը միանշանակ լինելու է մեր տեսակաւոր մէջ: Եւ մեր քաղաքացիները հենց երրորդ՝ խթանիչ դեղաչափի համար կարող են դիմել եւ ստանալ «Սփուլսիք Լայթ» տարբերակը»:

Հաագայի Դատարանը

Շարունակուած էջ 1-էն

միւս անձերը պէտք է վերադարձուին, քանի որ Հայաստանը չէ ներկայացուցած ապացոյցներ, որ անոնք կը պահուին Ատրպէյճանի իրենց ազգութեան կամ ցեղային խտրականութեան հիմքով:

Հայաստանը ընդդէմ Ատրպէյճանի եւ Ատրպէյճանն ընդդէմ Հայաստանի գործերը դատարանը կը քննէ ցեղային խտրականութեան բոլոր ձեւերու բացառման միջազգային համաձայնագրի ծիրէն ներս:

Հաագայի դատարանը, սակայն, շեշտեց, որ Ատրպէյճան պահուող անձերը պէտք է ենթարկուին անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի իրենց ազգային պատկանելութեան պատճառով, եւ աւելցուց, որ Ատրպէյճան պահուող բոլոր մարդիկ պէտք է պաշտպանուած ըլլան բռնութենէ եւ մարմնական վնասուածքներէ:

Դատարանը պարտաւորեց Ատրպէյճանին նաեւ ձեռնարկել բոլոր միջոցները՝ կանխելու եւ պատժելու վանդալիզմի դրսեւորումները հայկական մշակութային ժառանգութեան նկատմամբ, ներառեալ՝ պաշտպանութիւնը վայրէջել, գերեզմանատուններու եւ այլն: Ինչպէս նաեւ եզրակացուց, որ Պաքուն պէտք է կանխէ ցեղային ատելութեան եւ խտրականութեան հրահ-

րումն ու նպաստումը, ներառեալ պաշտօնեաներու եւ հանրային հիմնարկներու կողմէն, որոնք թիրախ կը դարձնեն ծագումով հայերը:

Փոքր ընդմիջումէ յետոյ Արդարադատութեան Միջազգային դատարանը հրապարակեց նաեւ իր որոշումը Ատրպէյճանի դիմումի վերաբերեալ:

Պաքուն պնդած էր, որ նույնիսկ պատերազմէն յետոյ Հայաստանը կը կանխէ ատրպէյճանցիներու վերադարձը իրենց նախկին բնակավայրերը, քանի որ ականապատած է տարածքները եւ չի տրամադրեր անհրաժեշտ քարտէզները ականագերծման համար:

Դատարանը չի համարեր, որ Հայաստանը պարտաւոր է ձեռնարկել քայլեր՝ աջակցելու Ատրպէյճանին կատարելու ականագերծում, ինչպէս նաեւ ցեղային խտրականութեան վերացման յանձնաժողովը պէտք է քայլեր իրագործէ, որ Հայաստան այլեւս չտեղադրէ ականներ:

Հայաստանի վերաբերեալ դատարանը որոշեց. «Հայաստանը իր ստանձնած պարտաւորութիւններուն համապատասխան պէտք է բոլոր միջոցները ձեռնարկէ՝ կանխելու ցեղային ատելութեան հրահարումն ու տարածումը, անոնց կարգին՝ իր տարածքին վրայ գործող կազմակերպութիւններու եւ անհատներու կողմէ՝ ուղղուած ցեղային ատրպէյճանցիներուն դէմ»:

ԱՆԻՖ-ը Հայաստան Կը Բերէ Նոր Խոշոր Գործընկերներ

Հայաստանի պետական հետաքրքրութիւններու ֆոնտը (ԱՆԻՖ) ստեղծուած է արտասահմանեան ներդրումներու ներգրաւման, արտածման աճի խթանման եւ Հայաստանի մէջ լայնածաւալ նախագիծերու մէջ ներդրումները համաֆինանսաւորելու նպատակով:

«Արմէնփրէս» հաղորդամբ, այս մասին լրագրողներուն հետ հանդիպման ժամանակ ըսաւ ԱՆԻՖ-ի տնօրէն Դաւիթ Փափազեան:

Դաւիթ Փափազեանի խօսքով՝ Իւրաքանչիւր խոշոր ներդրումային ծրագիր կ'ենթադրէ ամիսներու, երբեմն տարիներու աշխատանք, մինչեւ տեսանելի ըլլայ հանրութեան: 2021-ի Յուլիսին յայտարարուեցաւ այդպիսի ծրագիրներէն մէկուն՝ «էյր Արապիա»-ի հետ համատեղ ազգային օդանաւային ընկերութիւն ստեղծելու մասին, որ անուանուած է «Fly Arna» («Ֆլայ Արնա»): «Fly Arna» ազգային օդանաւային ընկերութիւնը 2022 թուականի Ապրիլ-Մայիս ամիսներուն կը սկսի կանոնաւոր թռիչքներ՝ նախնական չորս ուղղութիւններով:

Խոշոր նախագիծերէն մէկն ալ Հայաստանի արդիւնաբերական մաշտապի ամենամեծ՝ 200 մեկաուլի Տարուսի արեւային ուժանիւթի ծրագրի իրագործման համար 174 միլիոն տոլարի ներդրումն է:

«Յաղթողը միջազգային համբաւ ունեցող «Մաստար» ընկերութիւնն է Ապու Տապիից, որը վերականգնող ուժանիւթի զծով միջանի առաջատար ընկերութիւններէն է աշխարհում: Մեր մասնակցութիւնը այստեղ 15% է: Ծրագիրը կարելո՞ր է ամէն առումով՝ թէ նման խոշոր ներդրող ու միջազգային ճանաչուած ընկերութիւն Հայաստան բերելու, թէ Հայաստանը որպէս նման գործընկեր ունեցող ներդրումային ուղղութեան ներկայացնելու առումով: Բացի այդ, յատկապէս կարելո՞ր է, որ այս ծրագրով Հայաստանը մեծ քայլ է անում ժամանակակից աշխարհում ահռելի կարեւորութիւն ձեռք բերող ոլորտում՝ վերականգնող ուժանիւթում նման մասշտապային ծրագիր անելու ուղղութեամբ: Նշեմ, որ կայանները էլեկտրականութիւն



ԱՆԻՖ-ի տնօրէն Դաւիթ Փափազեան

կը սկսեն վաճառել մօտաւորապէս 2024 թուականի վերջերին», - ըսաւ Փափազեան:

Փափազեան նշեց, որ այս պահուն կը քննարկուի նաեւ վերականգնող ուժանիւթի ոլորտին մէջ շարունակական ծրագիրներու հնարաւորութիւնը: ԱՆԻՖ-ը նաեւ այլ ծրագիրներու մէջ հաւանական ներդրողներու հետ քննարկումներու մէջ է, եւ անոնք այն գործընթացներն են, որոնց արդիւնքներու մասին հանրութիւնը կ'իմանայ անոնց նիւթականացումէն ետք:

«Անցնելով մեր երկրորդ մասնաթիւն՝ դրամազուլտի ներդրումը, նշեմ, որ մէկ տարուայ ընթացքում ԱՆԻՖ-ի անձնակազմը հետագոտել է 200-ից աւելի յայտ «Ձեռնարկատէր+պետութիւն, հակաճգնաժամային ներդրումներ» հիմնադրամի շրջանակներում, որոնցից եօթը հաստատուել են, մէկը հաստատուելուց յետոյ չեղարկուել է: Այս պահին միւսներն էլ ինչ-որ ընթացքի մէջ են: Կան դէպքեր էլ, որ մեզ են մերժել, քանի որ մենք աշխատում ենք գործընկերութեան ձեւաչափով: Շատ կարելո՞ր է իմանալ, որ մենք հնարաւոր գործընկեր ենք, այլ ոչ թէ պարտադրուած», - ըսաւ Փափազեան:

ԱՆԻՖ-ի բոլոր ծրագիրները ուղղուած են շահագրգիռ կողմերուն օգուտ տալուն, տնտեսական, ընկերային եւ բնապահպանական կայունութեան՝ համապատասխան չափանիշներու պահպանմամբ:

Պայտըն-Փութին Յեռակայ Խօսակցութիւնը

Շարունակուած էջ 1-էն

Այս առնչութեամբ Հայութեան համար տակաւին անհասկանալի ու անբացատրելի կը մնայ Ռուսաստանի սերտ յարաբերութիւնը ՆԱԹՕ-ի մէկ այլ անդամ երկրի՝ Թուրքիոյ հետ: Պատմականօրէն Ռուսաստանն ու Թուրքիան գտնուած են հակադիր դիրքերու վրայ՝ իրար դէմ մղելով բազմաթիւ պատերազմներ: Այդ երկու երկիրներուն միջեւ հարիւրամեակներու հակադրութիւնը չի կրնար 180 աստիճան փոփոխութեան ենթարկուիլ, որքան ալ որ փորձէ Ռուսաստանը:

Այդ տարածաշրջանէն ներս Ռուսաստանի միակ վստահելի դաշնակիցը կը մնայ Հայաստանը, նկատի առնելով որ Վրաստան եւս կը ձգտի անդամակցիլ ՆԱԹՕ-ին: Պայտըն-Փութին այս խօսակցութենէն ետք, ինչպիսի գարգացումներ տեղի կ'ունենան եւ ինչքանով կ'ազդեն իրավիճակի մեղմացման վրայ կը մնան հարցական: Մինչ այդ, Ռուսաստանի վարած արտաքին քաղաքականութիւնը կովկասեան տարածաշրջանէն ներս՝ կարիք ունի վերահաշունարան:

Այս տարուայ Յունիսին Washington Post թերթին մէջ հրատարակուած յօդուածով Տոլի այդ ջանքերը բնութագրուած էին, որպէս «Ուաշինկթընի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման ուղղուած մոռցուած պայքար»:

1989-ի սկիզբը՝ Սպիտակի երկրաշարժէն շաբաթներ անց, Տոլ այցելած էր Հայաստան՝ ամերիկեան մարդասիրական օգնութեան հերթական չափաբաժինը տրամադրելով աղէտէն տուժածներուն:

Տոլ երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից էր, որու ընթացքին ան ծանր վիրաւորում ստացած էր, որու հետեւանքով ընդմիջտ անդամալոյծ եղած էր անոր աջ ձեռքը, ուստի կարճ ժամանակէն հեռացուցած էին անոր

«ՄԱՍԻՍ»

Վարչապետը Մասնակցած Է Վանօ Սիրադեղեանի Հոգեհանգիստի Արարողութեան



Ալեքսանդր Սպենդիարեանի անուան օփերայի եւ պալետի ազգային ակադեմիական թատրոնը տեղի ունեցած է Վանօ Սիրադեղեանի հոգեհանգիստի արարողութիւնը:

«Արմէնփրէս»-ի հաղորդամբ՝ հոգեհանգիստի արարողութեան մասնակցած են ՀՀ վարչապետ

Նիկոլ Փաշինեան, պետական, քաղաքական մշակութային գործիչներ, Սիրադեղեանի ընկերները, հարազատները եւ անոր համակրող քաղաքացիները:

Յուզարկաւորութիւնը կայացաւ Դեկտեմբեր 4-ին՝ ժամը 12:00-ին՝ Սիրադեղեանի հայրենի կոթի գիւղը:

Ս.Դ.Յ.Կ.ի Շնորհաւորական Այցը

Շարունակուած էջ 1-էն

Արեւմտեան թեմի հրատարակութիւնները շարքը նոր համալրում կ'ունենայ: Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր նախաձեռնութեամբ եւ օրհնութեամբ կազմուել է եւ յառաջիկային կը տպագրուի Արեւմտեան թեմի անդրանիկ Առաջնորդ եւ Կ. Պոլսի Պատրիարք, անուանի հոգեւորական ու գիտական գործիչ Գարեգին Արք. Խաչատուրեան Տրապիզոնցիի երկերի ժողովածուն «Հովիւի Խօսքեր» խորագրով: Նրանում ընդգրկուած են Մեծ պահքի հոգեշունչ քարոզների շարքը, հայ կեանքի զանազան դրսեւորումներին ուղղուած Առաջնորդական խօսքերը, որ կենդանի ու յոյժ արդիական են նաեւ այսօր, խոհափիլիսոփայական ու հոգեւոր այլ մտածումներ: Զարմանալի ազդու ու միաժամանակ բանաստեղծական ոճ ունի Գարեգին Արք. Խաչատուրեանը: Նրա գրուածքները, ձեւակերպումների ճշգրտութեամբ ու գեղարուեստական շունչով, կարողանում են ներգործել ընթերցողի մտքի ու սրտի վրայ, երկար խորհելու առիթ են տալիս:

Լրագրողներէն որ գտնուեցաւ Շուշի, մղկտաց ու ցաւալիօրէն ապրեցաւ անոր անկումը: Եղաւ Ստեփանակերտ՝ երբ յառաջացող ոսոխը սկսած էր սպառնալ մայրաքաղաքին: Տեսաւ արցախահայրութեան խոճապահար փախուստը Արցախէն Քարվաճառ ու ապա Վարդենիս: Տեսաւ կամաւորականներ, նահատակեալ գինուորներ բեռնակառքերու թափքերուն եւ հարիւրաւոր արիւնաթաթախ պատգարակներ: Ականատես եղաւ Մարտունիի մարտականներուն՝ որոնք մահու կենաց պայքարով պաշտպանեցին իրենց կիսաւեր քաղաքը:

Այս գիրքը պէտք է կարգան յատկապէս մեծխօսիկութեամբ տառապողներ: Սահագանգի նմանող յօդուածներու ժողովածու մըն է՝ սառն միտքով ու սիրտով վերլուծելու եւ հասկնալու համար, թէ ինչպէս եւ ինչու պարտուեցանք, ինչպիսի անթոյլատրելի սխալներ կուտակուեցան տասնամեակներու ընթացքին, ո՞ւր կը գտնուին մեր խոցելի կէտերը եւ ինչպիսի հնարամտութեամբ կարելի է գոյատեւել կովկասեան խճճուած տարածաշրջանին մէջ, այս հակասութիւններով լի ժամանակաշրջանին եւ հարեւաններու հետ բարդ յարաբերութեանց խորապատկերին:

Ան Ապրիլեան քառօրեայ պատերազմէն (2016) ժամեր առաջ, իր վերլուծական մէկ հրապարակումին մէջ անդրադառնալով հակամարտութեան խաղաղ կարգաւորման անլուծելիութեան՝ կը վերջացնէ այսպէս.-

«Բայց հիմնական պատճառն այն է, որ հակամարտութեան կողմերը, ձգտելով խաղաղութեան, չեն ուզում այդ խաղաղութեան համար գին վճարել:

Ու քանի դեռ նրանք պատրաստ չեն գին վճարել, խաղաղութիւնը երբեք չի գալու:

Այսօրուայ «ո՛չ խաղաղութիւն, ո՛չ պատերազմ» կամ «ե՛ւ խաղաղութիւն, ե՛ւ պատերազմ» իրավիճակը շարունակուելու է եւս տասնամեակներ՝ իսկ լուր նորանոր կեանքեր Հայաստան-Ատրպէյջան սահմանում եւ Ղարաբաղ-Ատրպէյջան զօրքերի շփման գծում»:



Գարեգին Արք. Խաչատուրեանի ժողովածուն Արեւմտեան թեմի «Ոսկեղենիկ» մատենաշարի Ե. հատորն է, որի նախորդ թիւերով, չիչեցնենք, 2019-21 թուականներին տպագրուել են՝

Յովհան Ոսկեբերան, Ապաշխարութեան պտուղներ (Քարոզներ եւ ձուռեր)

Յակոբ Նալեան, Առաքինի

Միանշանակ Որոշներ Կայացած Պացիենտներ Են

Մեր աշխատակից Ջենրիկ Անասեանի վերոյիշեալ վերնագրով յօդուածը՝ մեր թերթի նախորդ համարին մէջ լոյս տեսած է որոշ վրիպումներով: Ուստի գայն կը վերահրատարակենք ամբողջութեամբ, հայցելով յարգարժան յօդուածագրի ներողմտութիւնը: Խնք.

ՋԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Վստահ եմ, որոշ ընթերցողներ (ոչ երբեք ՈՐՈՇՆԵՐ, Հեն. Ա.) կարդալով ներքոգրեալ (կարծում եմ նոր բառ է, Հեն. Ա.) յօդուածի արտառոց վերնագիրը, կը հասկանան, որ խօսք է գնալու մեր լեզուի մաքրութեան եւ այն անաղարտ պահելու ճիգի մասին:

Լա՛ւ Հենրիկ, գրիր, ճիշդ ես, բայց ներկայիս դրա ժամանակն է, երբ բոլորիս մտահոգութիւնը բեւեռուած է Հայաստանի ճակատագրի, նրա լինելիքներու վրայ, ասում է բարեկամս, երկիրն է ձեռից գնում... այդ մասին գրիր:

Դրա մասին թէ խօսողներ կան, եւ թէ գրողներ ըստ որում՝ տեղիանուողի, գիտակ ու անգէտ մարդկանց, անփորձ իշխանաւորների կողմից, որոնք չգիտեն, որ Մայրենի անաղարտ լեզուն է ազգն ու երկիրը պահողը, երկրի հիմնասիւնն ու կռուանը: Զկայ մաքուր մայրենի լեզու, չկայ Հայրենիք, այդպէս են սովորեցրել մեզ մեր մեծերը:

Այս իմաստով չափազանց խօսուն է ճանաչուած գրող, լրագրող Վաչագան Ա. Սարգսեանի հետեւեալ միտքը, ՄԵՐ ԵՐԿԻՆՔԸ ՊԱՀՈՂ ՀՐԵՂԷՆ ՍԻՒՆ, այսպէս է անուանում նա մեր մայրենին:

Համաշխարհային անվերջ խմորումների ու իրադարձութիւնների քուրայում, մեր կամքից անկախ, մեր լեզուի մէջ են սողակում միջազգայնորէն ընդունուած, սակայն ժամանակի ընթացքում մոռացուած չ'օգտագործուող բառեր: Բնականաբար, եթէ ուզում ենք համաքայլ ընթանալ առաջատար երկրների հետ ու հաղորդակցուել միջազգային հարթակներում, պարտաւորուած ենք օգտագործել իրենց համար հասկանալի միջազգային տերմիններ: Սակայն Հայաստանում եւ Սփիւռքում Հայ լեզուի անաղարտութիւնը պահելու համար, ուղղակի պարտաւորիչ է օտար բառերն ու տերմինները վերածել մաքուր գրական հայերէնի:

Իրականում ես բնաւ մտադրութիւն չունէի Հայաստանի այս կործանարար օրերին հայ լեզուի մասին հանդէս գալ մամուլում, դիմատետրում եւ թէ հեռուստատեսութեամբ, սակայն պարզապէս փոխուեց հետեւեալ դէպքի պատճառով:

Մէկ ամիս, գուցէ եւ աւելի, Հայաստանի Հ1 ալիքով, Պետրոս Ղազարեանի հիանալի հարցազրոյցներից առաջ, ի ուրախութիւն բնիկ սփիւռքահայի, սկսուեց ամէն գովասանքի արժանի 510 վայրկեան (րոպէ) տեւողութեամբ արեւմտահայերէն լեզուով լուրեր հաղորդուել: Ոգեւորիչ, խրախուսիչ հիանալի նախաձեռնութիւն: Խօսք չկայ, ամէն ինչ առերեւոյթ կատարեալ է:

Նկարահանուած պատկերներն ընթանում են բովանդակութեանը համապատասխանող գրական նիւթով, որը դասական ուղղագրութեամբ ցուցադրուում է պատասառի վարի մասում:

Հապա՛յ ի՞նչ ասել պատասառի հետեւից գրաւիչ առողանութեամբ հնչող արեւմտահայերէնի մասին,

որ մատուցում է Անի Զէյթունցեանը: Հաւանաբար նա է արեւելահայերէնը վերածում արեւմտահայերէնի:

Պիտի խոստովանեմ, որ Անի Զէյթունցեանն է «մեղաւորը», որ ես որոշեցի այս տանջալից օրերին յօդուած գրել: Աղջիկս, Դու ի՞նչ պէս կարող ես քո խենթեանիք, մաքուր հայերէնի մէջ օգտագործել ԴԵՄԱՐԿԱՅԻԱ եւ ԴԵԼԻՄԻՏԱՅԻԱ օտար բառերը: Այդ երեկոյ ես տեղս չէի գտնում: Իմ սիրած հաղորդավարուհի՛ն, եւ այդպիսի վրիպո՞ւմ: Ես ուզում եմ հաւատալ, որ եղածը պարզ թիւրիմացութեան արդիւնք է: Մտավախութիւնս կայանում է նրանում, որ Անիի այդ սխալ քայլը կարող է վարակիչ դառնալ Սփիւռքի լրատուական մարմինների եւ հեռատեսիլի հաղորդումների համար: Միայն ցանկալի է, որ պէսզի նա կարողանայ փոքրինչ դանդաղեցնել ընթերցման արագութիւնը:

Հայաստանի հաղորդավարների բոլորի մէջ արագ ընթերցելու մրցոյթի յաղթողի պսակը պատկանում է ՀԶԻ խօսնակ Գոհար Սրապիոնեանին: Էստեղ է ասել գիւղացին՝ «Տնաշէ՛ն, ո՞վ ա ընկել հետեւիցդ, էդ խի՞ ես վազում», իսկ գիւմրեցին կ'աւելացնեն՝ «Մէ հատըմ ժպտայ քուր ջան...», թէ չէ սըֆաթիդ նայել չի էղնում...»:

Այո՛. չափազանց կարեւոր է ժպտալ, ժպտալ ունենալը, մանաւանդ մշտապէս պատասառի վրայ երեւացող անձանց համար:

Ժպտալ դէմքերին, ասողխօսող, մշտապէս հանպատրաստի արտայայտութիւններով միջոցառում աշխուժացնող հաղորդավարներ էք ուզում տեսնել՝ եկէք Գլենդէլ ու դիտէք ARTN կայանի շնորհալի հաղորդավարներ Արուսեակ Գէորգեանի եւ Դէրենիկ Եսփոճեանի վարած հաղորդումները

Մինչ մենք այստեղ՝ Սփիւռքում պաշարում ենք օտար բառերից ձերբազատուելու համար, Հայաստանում օրէօր աւելանում են օտար բառերը:

Փառք Աստծոյ Հայաստանում արդէն օգտագործում են ԴԵՄԱՐԿԱՅԻԱ եւ ԴԵԼԻՄԻՏԱՅԻԱ բառերի հայերէնը: Միայն մէկ ճշգրտում անեմ: Հայերէնում ԴԵՄԱՐԿԱՅԻԱ նշանակում է ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ, ՍԱՀՄԱՆԱԲԱԺԱՆՈՒՄ: Ինձ մօտ եղած Հայերէն բառարանների մէջ ԴԵԼԻՄԻՏԱՅԻԱ բառը չկայ: Ես այն գտայ 34 կիլոգրամ կշռող հաստափոր ՌՈՒՍ ՀԱՅԵՐԷՆ բառարանում, որի թարգմանութիւնն է՝ ՍՊԱՌԱՌԱՋՄԱԿԱՆԱՑՈՒՄ: Կարծում եմ անիմաստ է այս բառի գործածելը, պէ՛տք է բաւարարուել Սահմանագծում, Սահմանազատում բառերով, :

Ընդհանրապէս, միշտ պէտք է չիշել, որ հայերէն լեզուի մէջ «ՅԻԱ» վերջածանցով բառ գոյութիւն չունի, չի եղել: Այն ամէնը ինչ օգտագործում ենք այդ վերջոյթով՝ տառացի եւ բառացի վերցուած է ռուսերէնից: Ռուսներն էլ վերցրել են անգլերէնից ու ֆրանսերէնից: Արդարութիւնը պահանջում է նշել, որ ՅԻԱ վերջածանցով մի շարք բառեր տարիների ըն-

թացքում «հայացուել» են, ինչպէս օրինակ՝ Ռեւոլուցիա Յեղափոխութիւն, Կոնստիտուցիա Սահմանադրութիւն, Միլիցիա Ոստիկան, Ազիտացիա Քարոզչութիւն, Ամպլուտացիա ... Անդամահատում, են:

Արդէն քանիբոլորդ անգամ անդրադառնում եմ ՄԻԱՆՇԱՆԱԿ բառին, որ բառացի թարգմանութիւնն է ռուսերէն ՕԴՆՈՉՆԱՉՆՕ բառի, որ նշանակում է Մէկ նշանակութիւն, որի մէջ պակասում է հաստատական իմաստը: Դրա փոխարէն մենք ունենք հաստատական բառերի լայն ընտրանի, ինչպէս ասենք՝ Անշուշտ, Իհարկէ, Անպայման, Անկասկած, Հարկաւ, են, են: Մէկ օրինակ.

Բազրատ, ի՞նչ ես կարծում, Սիւնիքը կը կարողանա՞նք պահել: Անշուշտ, անկասկած, Միանշանակ պիտի լարենք մեր ուժերը: Չեղաւ բարեկամս, Միանշանակս ո՞րն է, ասա ի հարկէ, Անպայման:

Իմ քննադատականի արդիւնքում ՄԻԱՆՇԱՆԱԿ բառից վերջնականապէս «ձերբազատուեց» ՀՀ Առողջապահութեան նախարար Անահիտ Աւանեսեանը: Երկու ամիս հետեւելով նրա ելոյթներին, նա ոչ մի անգամ չ'օգտագործեց այդ բառը, որի համար իմ անկեղծ գոհունակութիւնն եմ յայտնում երիտասարդ տիկնոջը:

Մեր բառապաշարի մէջ ամբարօրէն իր երթն է շարունակում արհեստականօրէն գոյականացուած հոգնակի ձեւով օգտագործուող ՈՐՈՇ ածականը:

Երեկուայ երեկոյին ՈՐՈՇՆԵՐ բացակայ էին, կարողում է հաղորդավարը, չեղաւ, չի կարելի, մորթուեց հայերէն լեզուն: Հասկացէք վերջապէս, ՈՐՈՇ բառը ածական է, որ նշանակում է տեսակ եւ գոյական չի կարող դառնալ: Դրա համար մենք ունենք ՈՄԱՆՔ, ՈՒՐԻՇՆԵՐ, ԱՅԼՈՔ, ԱՅԼՔ: ՈՐՈՇ ածականը գործածուում է գոյականի հետ, ինչպէս օրինակ՝ Որոշ թեկնածուներ, որոշ տեղերում, որոշ հաստատում եւն:

Որքան ուզում ես ասա՛, կամ

գրիր, ԿԱՅԱՆԱԼ բառը բայ է, գործողութիւն ցոյց տուող, եւ ածական չի կարող դառնալ: Երբեք չի կարելի ասել ԿԱՅԱՅԱՄ գիւղատնտես, ԿԱՅԱՅԱՄ խոհարար, ԿԱՅԱՅԱՄ երգիչ: Պիտի օգտագործել հետեւեալ ածականներ՝ ՓՈՐՁՈՒՄ, ՀՄՈՒՏ, ԳԻՏԱԿ, ԻՄԱՍՏՈՒՆ են:

ԿԱՅԱՆԱԼ բայի օգտագործման երկու օրինակ.

Փաշինեան Պուտին հանդիպումը կայացաւ Նոյեմբեր 26ին: Ընդդիմադիրները որեւէ որոշում չկայացրին:

Էս անտէր Covid19ը ոչ միայն բազում մարդկային կեանքեր իւլեց, այլեւ, աղտոտեց մեր հայերէնը: Էլ՝ ՊԱՆԴԵՄԻԱ, ՎԻՐՈՒՍ, Էլ՝ ՊԱՅԻԵՆՏ ու ՀՈՍՊԻՏԱԼ, Էլ՝ ՎԱԿՅԻՆՎԱԿՅԻՆԱՅԻԱ ու ԿՐԱԿԱՏ: Եւ այս բոլոր օտար բառերի հայերէնն ունենք մեր բառապաշարում: Սակայն, բոլոր հեռուստակայաններն ու լրատուամիջոցները (հիմնականում բացառեալ սփիւռքահայ մամուլը) գիշեր ու գոր օգտագործում են այդ բառերը, կարծելով թէ ՊԱՅԻԵՆՏ կամ ՎԱԿՅԻՆ ասելով երաժշտականացնում են մեր լեզուն: Ինչո՞ւ ասել ՀԻՎԱՆԴ կամ ՊԱՏՈՒԱՏՈՒՄ, երբ լսէք թէ ինչ երաժշտական է հնչում ՊԱՅԻԵՆՏ, ՎԱԿՅԻՆ...:

Վերջերս մշտապէս «գինուած, պատրաստուած» հաղորդավար Պետրոս Ղազարեանը հեռուստադիտողներին հայոց լեզուն օտար բառերից ազատելու միջոցներ փոխանցելու համար, հարցազրոյցի էր հրաւիրել ՀՀ Լեզուի կոմիտէի նախագահ Դաւիթ Գիւրջինեանին: Վերջինս սարիցձորից, դէսիցդէնից մաքուր հայերէնով գեկուցում կարդալու պէս, ոչ մի օրինակ չբերեց պահանջուող նիւթի վերաբերեալ: Եւ խօսքն աւարտեց մօտաւորապէս հետեւեալ նախադասութեամբ.

Դէ, մենք սխալ բառեր շատ ենք ասում՝ ՀԱՄԲՈՒՅՐ ասելու փոխարէն ասում ենք ՀԱՄԲՅՈՒՐ: Եւ ուրիշ ոչինչ... Մեկնաբանութիւնները թողնում եմ ընթերցողին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՈՎԱՆԱՐՈՒԹԵԱՐ
Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի
Սրբազան Առաջնորդ
Գերշն. Տ. Յովնան Արք. Տերտերեանի

Չորեքշաբթի, Դեկտեմբեր 15, 2021, Երեկոյեան Ժամը 7ին
Առաջնորդարանի «Արմէն Դամբար» Դահլիճին մէջ

Տեղի պիտի ունենայ

ՇՆՈՐՀԱՅԱՆԴԵՍ
Սուրբ Գրիգոր Վարդապետ Նարեկացիի
«Մատեան Ողբերգութեան»
Աշխարհաբարի Նոր Թարգմանութեան

Թարգմանութիւնը կատարուած է
Հոգշն. Տաճատ Ծ. Վարդապետ Եարտըմեանին կողմէ

«Մատեան»ին Նոր Թարգմանութիւնը
կը ներկայացնէ Թարգմանիքը

ՍԻՐՈՎ ՀՐԱԻՐՈՒԱԾ Է
Մշակութասեր Հասարակութիւնը

Հայաստանի Մարդասիրական Առաքելությունը Հալեպի Բժշկական Հաստատություններուն



2021 թվականի Դեկտեմբեր 1-ին, Սուրիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան հետ համագործակցութեամբ՝ Հայաստանի մարդասիրական առաքելութեան բժշկական խումբը Հալեպի բժշկական հաստատութիւններուն փոխանցեց աւելի քան 3.5 թոն բժշկական եւ առողջապահական պարագաներ:

Առողջապահութեան ոլորտի պատասխանատուները իրենց երախտագիտութիւնը յայտնեցին հայ բժիշկներուն՝ տրամադրուած բժշկական պարագաներուն, ինչպէս նաեւ՝ «Հայ ծերանոց», «Դար-

մանատուն», ընկերաբժշկական կեդրոններէն ներս եւ շարք մը այլ բժշկական հաստատութիւններէ ներս ցուցաբերած բժշկական ամենօրեայ աջակցութեան համար:

Անոնց խօսքով՝ հայ եւ սուրիացի բժիշկները համատեղ ջանքերով կ'օգնեն տուժածներուն: Այսպիսով, հակառակ Հալեպի մէջ թագաժահրի համաճարակին հետ կապուած շարք մը սահմանափակումներուն եւ դժուարութիւններուն, Հայաստանի մարդասիրական առաքելութեան խումբը բարձր մակարդակով կը շարունակէ իրականացնել իր աշխատանքները:

Լուիի Հայկական Փողոցին Մէջ Բացուեցաւ Հայաստանի Պատուոյ Հիւպատոսարանը



Լուիի հայկական փողոցին մէջ բացուեցաւ Հայաստանի պատուոյ հիւպատոսարանը: Ինչպէս տեղեկացուցին Ուքրանիոյ մէջ ՀՀ դեսպանութենէն, պատուոյ հիւպատոսութեան գրասենեակի բացման նպատակով՝ նոյեմբեր 26-ին Լուիւ ժամանած էր Ուքրանիոյ մէջ ՀՀ դեսպան Վլատիմիր Կարապետեանը:

Հանդիսաւոր արարողութեան ներկայ էին եւ ողջոյնի խօսք արտասանեցին Լուիւի մարզպետ Մաքսիմ Քոզիցքին, Լուիւի քաղաքապետ Անտրէյ Սատովին, Հայ Առաքելական եկեղեցւոյ Ուքրանիոյ հայոց թեմի առաջնորդ Մարկոս եպիսկոպոս Յովհաննիսեանը:

Բացման խօսքին մէջ դեսպան Կարապետեանը խօսեցաւ Լուիւի մէջ հայերու աւանդին եւ հայկական ժառանգութեան մասին, յոյս յայտնելով, որ պատուոյ հիւպատոս Նորիկ Գէորգեանը իր ներդրումը կը բերէ հայ եւ ուքրանացի ժողովուրդներու բարեկամական յարաբերութիւններու զարգացման գործին մէջ: Դեսպան Կարապետեանը ընդգծեց, որ Լուիւը Ուքրանիոյ

մէջ առանձնապատու կ'ըլլայ մեր հայերուն համար, որովհետեւ Լուիւի մէջ հայերը ոչ միայն ունին բազմադարեայ եւ հարուստ պատմութիւն, այլ նաեւ մեծ աւանդ ներդրած են քաղաքի հոգեւոր եւ մշակութային կեանքի զարգացման գործին մէջ:

Հաղորդագրութեան մեջ նշուած է, որ այսօր ալ հայ համայնքը համախմբուած է Լուիւի պատմական կեդրոնին մէջ գործող հայկական եկեղեցւոյ շուրջ, որ քաղաքին ամէնէն հին եւ զեղեցիկ պատմամշակութային ճարտարապետութեան նմուշներէն մէկն է:

Նոյն օրը տեղի ունեցան դեսպան Կարապետեանի առանձին հանդիպումները Լուիւի մարզի նահանգապետ Մաքսիմ Քոզիցքիի եւ Լուիւի քաղաքապետ Անտրէյ Սատովիի հետ: Հանդիպումներուն ընթացքին քննարկուեցան մարզային եւ քաղաքային մակարդակներով Հայաստանի եւ Ուքրանիոյ նշուած տարածաշրջանին միջեւ յարաբերութիւններու զարգացման ուղղութիւնները՝ երկուստեք հետաքրքրութիւններ կայացնող ոլորտներէն ներս:

Ճափոնի Դեսպանութեան Աջակցութեամբ Պիտի Վերանորոգուի Էջմիածնայ 13-րդ Մանկապարտզը



Հայաստանի մէջ Ճափոնի դեսպան Մասանորի Ֆուքուշիման եւ էջմիածնայ 13-րդ մանկապարտզի տնօրէն Աննա Սողոմոնեանը կնքեցին դրամաշնորհային պայմանագիր մը, որուն համաձայն պիտի վերանորոգուին մանկապարտզի երկու մասնաշէնքերուն դասարանները, մարզապահար, հանդիսութիւններու սրահը, պէտքերունները, խոհանոցը եւ պատշգամբները: Էջմիածնայ 13-րդ մանկապարտզի հիմնանորոգման ծրագրին 90,181 ամերիկեան տոլար արժողութեամբ դրամաշնորհային պայմանագիրը ստորագրուած է Մարդկային անվտանգութեան «Grassroots» ծրագիրներուն համար դրամաշնորհային աջակցութեան շրջածիրէն ներս:

ՀՀ Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզութեան նախարարութեան արտաքին կապերու եւ սփիւռքի վարչութեան պետ Արկաղի Պապոյեանը խիստ կարեւորեց նման ծրագիրներու իրականացումը. «Շատ կը կարեւորեմ, եւ յոյս ունիմ, որ նման գործընթացները կ'ըլլան շարունակական: Մենք Ճափոնի դեսպանատան մեր գործընկերներուն հետ բաւական սերտօրէն կը համագործակցինք: Եթէ չեն սխալիր՝ ասիկա մեր երրորդ համագործակցութիւնն է: ՀՀ Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզութեան նախարարութեան անունէն յաջողութիւն մաղթելով այս նախաձեռնութեան՝ կը վերահաստատենք գոր-

ծընթացին կարեւորութիւնը, որ կը նպաստէ ոլորտի զարգացման», - ըսաւ ան:

Ծրագրին նպատակն է բարելաւել էջմիածնայ 13-րդ մանկապարտզի երեխաներուն եւ դաստիարակներուն ուսումնական եւ աշխատանքային միջավայրը: Ծրագրին շնորհիւ՝ աւելի քան 420 երեխաներ եւ ուսուցիչներ պիտի օգտուին մանկապարտզին բարելաւուած պայմաններէն:

Հայաստանի մէջ Ճափոնի դեսպան Մասանորի Ֆուքուշիման ողջոյնի խօսքին մէջ շեշտեց, որ իր համար մեծ պատիւ եւ հաճոյք է մասնակցիլ նման կարեւոր գործընթացներու. «Ուրախ եմ, որ այս ծրագրին շնորհիւ շուրջ 420 երեխաներ եւ դաստիարակներ պիտի օգտուին մանկապարտզին բարելաւուած պայմաններէն: Ճափոնի մէջ կը գիտակցին պատշաճ կրթական հաստատութիւններու կարեւորութիւնը ուսումնառութեան ամբողջ ընթացքին», - ըսաւ Մասանորի Ֆուքուշիման:

Էջմիածնայ 13-րդ մանկապարտզի տնօրէն Աննա Սողոմոնեանը շնորհակալութիւն յայտնեց Ճափոնի դեսպանին, բոլոր կազմակերպիչներուն եւ յաւելեց, որ այս ծրագրին շնորհիւ՝ անոնք ոչ միայն պիտի ունենան նոր ու բարեկարգուած մասնաշէնք մը, այլ նաեւ մանկապարտզը պիտի կարենայ ընդունիլ յաւելեալ 30 երեխաներ, իսկ երկու քաղաքացիներ ալ պիտի ապահովուին աշխատանքով:

Սփիւռքահայուն Ստեղծած Markoo.Am Հարթակը Պիտի Համախմբէ Հայ Ազդեցիկ Դէմքերը

Տուպայի մէջ ապրող եւ աշխատող հայազգի գործարարը այժմ Հայաստանի մէջ է: Հայրենիքի մէջ գտնուելուն հիմնական նպատակն էր ստեղծել ամբողջական հարթակ մը, որ կը միաւորէ գործարարական ընկերութիւններն ու ազդեցիկ շուկայացմամբ զբաղող անձերը:

«Այս գաղափարը իրականացնելու գործին մէջ շատ մեծ դեր ունէր կինս, որովհետեւ առաջին քայլն ի վեր միասին աշխատած ենք, որմէ ետք մեզ միացաւ եղբայրս՝ Գօգո Չափարեանը, որ Ամերիկայէն տեղափոխուեցաւ Հայաստան...», - ըսաւ Յարութ Սոլաքեանը:

Իր մեծ գաղափարին համար, Յարութ Սոլաքեանը իր առաջին քայլերը առաւ այսպէս. Արտերկրի մէջ երկար տարիներ ազդեցիկ

շուկայացմամբ զբաղելով՝ շատ խնդիրներու հանդիպած էր: Անոնց միակ լուծումը տեսաւ սեփական ընկերային հարթակը հիմնելու մէջ:

«Այստեղ խօսքը շատ դիւրին համագործակցութեան մասին է, երբ գործարարութիւնները կրնան իրենց առաջարկութիւնները ընել առցանց հարթակին վրայ եւ նոյն տեղը ազդեցիկ դէմքերը տեսնեն այդ առաջարկները եւ ընդունին», - ըսաւ Յարութ Սոլաքեանը:

Markoo.am, Հիմադիրը այս անուանումն է, որ տուաւ հարթակին՝ «Mark» արմատը կապելով «Marketing»-ի հետ, իսկ վերջին «ու» հնչիւնը կապելով հայկական «Ուրարտու թագաւորութեան» անուն վերջին հնչիւնին հետ:

Պարսք Երկրի Դարեհ Թագաւորի Բագահաստանա -Բրիտանոնի Արձանագրութիւնը



ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ (Շարունակուած նախորդ թիւէն)

Ինչպէս արձանագրութիւնը վկայում է, որ Արմինայի արմինները եւ ոչ թէ Ուրարտու-Ուրաշտուն էր ազատագրական պայքար մղում Դարեհի պարսկական իշխանութեան դէմ: Եթէ այդ արմինները մարերի օգնութեամբ իշխանութեան եկածներ ու քեմենեանների հովանաւորութեան տակ եղած ժողովուրդի մնացորդներ լինէին, ինչու պիտի ապստամբէին եւ «Թշնամի ուրարտացիների առկայութեամբ» վտանգէին իրենց նպատակաւոր դրութիւնը: Արմինա երկրի այդ արմինները մարերի կողմից նուաճուած տեղի իմաստով «Ուրարտացի» կոչուածներն էին: Նրանք ապստամբել էին՝ վերականգնելու իրենց Արմինա-Ուրարտու երկրի երբեմնի անկախութիւնը: Մարերը, եւ յետոյ էլ քեմենեանները, իրենց նուաճած Ուրարտուն չէին անուանի Արմինա, եթէ այն արմինների երկիրը եղած չլինէր: Հնագէտները, Ուրարտական անուանուած մշակութի շերտի վրայ նոր նստուածք չեն գտել, այն շարունակուել է նոյնութեամբ: Արմինայի «Արա Արայեան» գահատոհմի անկումից պատմականօրէն կարճ ժամանակ անց Նախրեանների նոր գահատոհմի՝ Երուանդունիների, իշխանութեան գալով, կրօնա-մշակութային փոփոխութիւն տեղի չի ունեցել, պարզապէս Նախրեանների իշխանական մի նոր տոհմի փոփոխութիւնն էր այն:

Պարսկաստանի մայրաքաղաք՝ Պերսեպոլիսում, Քսերքսեսի պալատի քանդակներում պատկերուած Արմինա-հայերի տարագները նման էին Նինուէի Աշշուրբանիպալի պալատի որմի քանդակին ու պալատի դրան պատկերուած «Ուրարտու»-ի պատուիրակների տարագներին: Հնարաւոր էր արդեօք, մանաւանդ այդ ատեն, տարբեր ժողովուրդներ նոյն տարագները կրած լինէին:

Արմինա-Հայերի թագաւորները յուղարկաւորուել էին Եկեղեցաց գաւառում: Արմինա-Ուրարտու հիմնադիր՝ Նախրեանների զարմից Արամէի Արա-Արայեան տոհմի արքաները, այդ գաւառում յուղարկաւորուելու ականդրոյթ դարձած սովորութիւնը շարունակուել է նաեւ Արմինա-Ուրարտական թագաւորական տոհմի յաջորդների կողմից էլ: Թագաւորական տարբեր հարստութիւնների նոյն մշակութի կրողների ուղղակի շարունակութեան ճշմարտութեան ապա-

ցոյցն է այդ: Արմինա-Ուրարտական տիրակալութեան ժամանակների տեղանունները նոյնն էին մնացել, ինչպէս՝ Ալգինի-աղձնիքը, Մուպանի-Մոփքը, Էրեբունի-Երեւանը, Ախուրխանի-Ախուրեանը, Մուխնա-Սեւանը, Բիանա-Վանը, Կուլմախա-Կամախը, Ուրարտու-Արարատը եւ այլ տեղանուններ: Արմինա-Ուրարտական հարստութեան անկումից (590-585մ.թ.ա.) մինչեւ Երուանդունիների Երուանդ Ա. թագաւորի իշխանութեան գալը (570 մ.թ.ա.) բնակչութեան կազմի փոփոխութիւն չէր եղել, նրա լեզուն փոխելու ընդունակ օտար եկուորների հոսք չի եղել: Եթէ այն փոխուած լինէր, ապա այն պիտի լինէր նոր իշխողներ՝ մետացիների, կամ պարսիկների լեզուն, իսկ Արմինա երկրի արմինների Հայերէնը նրանց լեզուն չէր: Այնտեղ պահպանուել է բնիկ իշխողների՝ Նախրեանների, լեզուն:

Արմինա-Ուրարտու երկրի պաշտօնական գրութիւնների, եւ ոչ թէ ժողովրդական գրութիւնների, համար օգտագործուել է խուրրիական մի բարբառ, որի պատճառով որոշ գիտնականներ ժխտում են այնտեղ իշխող Նախրեանների հնդեւրոպայիս լինելը: Նախրեանների Միտանի պետութիւնում, խուրրիերէնը եղել է պաշտօնական ու ժողովրդական գրագրութիւնների հիմնական լեզու, եւ նաեւ երկրի երկրորդ լեզու: Սակայն, գիտնականները չեն մերժում այնտեղ իշխողների «հնդեւրոպական» ցեղին պատկանած լինելը:

Եթէ Արմինա-Ուրարտու թագաւորական հարստութիւնը հիմնադրած Նախրեանները խուրրիաիսու եղած լինէին, ապա նրանք Երուանդունիների ու Արտաշէսեանների ժամանակ էլ խուրրիաիսու կը լինէին, սակայն այն այդպէս չի եղել, քանզի ժողովուրդների փոփոխութիւն տեղի չի ունեցել: Այդ ատեն Արմինները օգտագործել են նաեւ Արամերէն, Պարսկերէն, Յունարէն սակայն նրանք չեն համարուել Արամէացի, Պարսիկ կամ Յոյն: Մ.թ.ա. II եւ I հազարամեակներին, Ասորեստանի եւ Արմինա-Ուրարտուի արքաների յիշատակած Նախրեան ցեղերի Բիախանները, Հայաստանի Արշակունիների գահակալութեան ատեն հանդէս են եկել որպէս առանձին Նախարարութիւններ, ինչպէս՝ Daiaeni՝ Տայք, Abiliani՝ Աբեղեան, Arsuniuini՝ Արծրունի, Abuni՝ Հանունի, Eriahi՝ Երիակ, Abaeni՝ Ապահունի, Alzinini՝ Աղձնիք, Supani՝

Մոփք ու շատեր: Այդ Հայ Նախարարութիւնները Արմինա-Ուրարտուի Նախրեան ցեղերի ժառանգորդներն էին: Նրանք, Նախինները նման ունէին իրենց ինքնուրոյն տարածքները եւ առանձին խօսակցական բարբառները, որոնց հնչիւնային ու բառային պաշարը գրաբարի համեմատութեամբ այնպիսի տարբերութիւններ ունէին, որ հնարաւոր էր նրանց համարել գրաբարի կրողների յետագայ սերունդներ:

Հայ լեզուի բարբառների միջեւ տարբերութիւնները մեծ են, ինչպէս նաեւ հնդեւրոպական միջճիւղային լեզուների տարբերութիւնները: Որոշ Հայ բարբառներ անհասկանալի են մէկը միւսին, այնտեղ կան բառեր ու քերականական տարբեր, որոնք յատուկ չեն գրաբարին: Բարբառներից շատերի մի մայր լեզուից բաժանումը տեղի պիտի ունեցած լինէր շատ վաղ անցեալում: Պրոֆեսոր Ռ. Իշխանեանը ասել է՝ «Հայ բարբառները լիովին հնարաւոր կը լինի անտանել հնդեւրոպական ընտանիքի Հայկական լեզուախումբը»: Հնդեւրոպական Նախլեզուն ուսումնասիրելու համար Եւրոպական գանազան երկրների լեզուաբաններ Հայաստան են գալիս՝ Հայկական բարբառներում հնդեւրոպական Նախլեզուի հետքեր փնտռելու: Հայոց ոսկեդարի Հայերէնում են ամենաշատ պահպանուել հնդեւրոպական Նախլեզուի առանձնայատկութիւնները: Հայերէն լեզուի բարբառների տարբերութիւնների կրողները պահպանել էին այդ ինքնուրոյնութիւնները որպէս մի առանձին ցեղային միաւոր, մի առանձին տարածքաշրջանում: Հայկական Նախարարութիւնները որպէս ժառանգները Հայկական Լեռնաշխարհի Նախրեան ցեղերի, նրանց լեզուները պատկանում են հնդեւրոպական Նախլեզուի Հայկական բնիկ լեզուախումբին, ինչպէս գերմանացի լեզուաբան Հիւբըմանը պիտի եզրակացնէր՝ «Հայերէնը հնդեւրոպական մայր լեզուի առանձին լեզուախումբ է եւ ոչ թէ պարսկերէն լեզուի մի ճիւղ»: Արմինա-Ուրարտական առաջին եւ երկու հարիւր տարիների յետոյ վերջին արձանագրութիւնների լեզուների միջեւ նշանակալի փոփոխութիւն-

ներ չեն նկատուել, այն խօսակցական լեզու չի եղել, այլապէս փոփոխուած կը լինէր: Ասուրա-բաբելոնեան թշնամու դէմ մղուած ճակատամարտում իր աղեղով նրանց առաջնորդ Բէլին խոցած Հայկը՝ (հայերի Նախահայր ասուածը) իրաւուն է, ուրարտական արձանագրութիւնը վկայում է՝

«Իրաւուն դուրս եկաւ (արշաւի) իր գէնքով, յաղթեց ասորեստանեան բանակին»:

Իրաւուն-Հայկը եղել է Նախրեան Արմինա-Հայերի աստուածը: Այդ ատեն Արմինա-Ուրարտուի արձանագրութիւնների լեզուն չի եղել նրանց խօսակցականը: Արտաշէսեան գահատոհմի արքաների, Արշակունիների տոհմի թագաւորութեան ատեն Նախրեան ցեղերի գլխաւորները հանդէս են եկել որպէս Նախարարութիւններ, որոնք հայոց «գահմանակում» յիշատակուել են արքայի գահի կողքին, Նախարարական աթոռների առաջաւոր դիրքերում: Արմինա-Ուրարտական ժամանակների Նախրեան ցեղերի ժառանգ մնացածներն են նրանք, ինչպէս՝ Խոռխոռունիները, Ռշտունիները, Արծրունիները, Տարօնի, Մոփքի, Մոկաց, Ապահունիների, Տայքի, Աբեղեանների եւ այլ բազում Նախարարութիւնները: Հայկական Լեռնաշխարհում Արմինա-Ուրարտու թագաւորական տոհմին յաջորդած թագաւորութիւնները եղել են Նախրեան ցեղերի Երուանդունի ու Արտաշէսեան իշխանական գահատոհմերի պետութիւններ: Սահմանակից Պարթեւաստանի ու Մերձաւոր Արեւելքին տիրած Հռոմի համաձայնութեամբ Արմինա-Հայաստանին պարտադրուել է Պարթեւների Արշակունի տոհմից՝ Տրդատ Առաջինին մ.թ. 66-67 թուականներին թագաւորելու Հայաստանում: Հազար տարիներ Նախրեանների Նախարարական տները հանդուրժել էին ուրիշ ցեղերի ժառանգներին թագաւորելու Հայաստանի Մեծ ու Փոքր Հայքերում՝ Արմինա Հայկական Լեռնաշխարհում: Ափոս, ինչպէս եղեւ: Չկա՞ր յանդուգն ու մի քաջ Նախրեանների Բիախան տոհմերից մի Նախարար, որ ասէր ես եմ Արմինայի արքան, ես եմ թագաւորելու այս երկրում, ես եմ նրա այրուածին ու հետեւակ գորքին առաջնորդելու կուռի, չեղաւ...:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email:-----

ՀՈԳԵՅԱԼՆԳԻՍ



ՄԱՐՕ (ԵՐԿԱՅՆՀԱՐՍԵԱՆ) ԱՃԷՄԵԱՆ

Հանգուցեալ Մարո Աճէմեանի մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Դեկտեմբեր 2021ին, կէսօրէն ետք ժամը 2ին, հանգուցեալի շիրիմին մօտ, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝ Ամուսինը՝ Հրաչ Աճէմեան Դուստրը՝ Սալբի եւ Վահէ Ռպչեան եւ զաւակները՝ Շանթ, Արէն եւ Վահան Զաւակը՝ Արա Աճէմեան Եղբայրը՝ Օհան եւ Իվոն Երկայնհարսեան եւ զաւակները՝ Սոնա եւ Նայիրի Եղբայրը՝ Գօգօ Երկայնհարսեան Եւ համայն Աճէմեան, Ռպչեան, Առաքելեան, Մելքոնեան, Տէմիրճեան, Պալեան, Տավանի, Յովհաննէսեան եւ Քիւրբէլեան ընտանիքները, հարազաններն ու բարեկամները Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Փաստինայի Raffi's Catering and Banquet Hall սրահին մէջ, 3887 E.Sierra Madre Blvd, Pasadena, CA 91107:

OBITUARY



Dr. Vartiter Kotcholosian- Hovannisian (Kharkov, Ukraine, 1931—Los Angeles, California, 2021)

It is with great sorrow that we announce the passing on Thanksgiving evening, November 25, 2021, of Vartiter K. Hovannisian Beloved wife of Richard Hovannisian Mother of: Raffi & Armenouhi Hovannisian, Armen & Elizabeth Hovannisian, Ani & Armenio Kevorkian, Garo & Arsineh Hovannisian and families; Sister of Nazik Messerlian and family; Sister-in-law of John, Ralph, and Vernon Hovannisian and families of Fresno-Visalia; In-law of Takouhi Khatchikian, Zabel Aranosian, Seda Haroutiounian, and Zohrab Kevorkian families. Funeral Service on Friday, December 10, 12 noon, Holy Trinity Armenian Apostolic Church, 2226 Ventura Street, Fresno, CA 93721 In lieu of flowers donations may be made to: -Oran (Center for Underprivileged Children in Armenia) c/o 2217 Observatory Ave, Los Angeles CA 90027 -Armenian Educational Foundation 600 W Broadway UNIT 130, Glendale CA 91204

Ոչ եւս է Տոքթ. Վարդիթեր (Կոճուղոգեան) Յովհաննէսեան

Յաւով իմացանք Տոքթ. Վարդիթեր (Կոճուղոգեան) Յովհաննէսեանի մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի 25 Նոյեմբեր, 2021ին Լոս Անճելոսի մէջ: Տան կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի 7 Դեկտեմբեր, 2021ին, Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցոյ մէջ: Իսկ յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ 10 Դեկտեմբեր 2021ին, կէսօրուան ժամը 12:00ին, Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ:

Հանգուցեալը ծնած էր 1931ին, Խարքով (Ուքրանիա): Մեր խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի ամուսնին՝ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան եւ համայն ընտանեկան պարագաներուն:

«Հովիւի Խօսքեր»

Շարունակուած էջ 11-էն

Կեանքի ուղին (Հոգեւոր գրոյցներ) Յովնան Արք. Տէրտէրեան, Պատգամներ (Ասոյթներ եւ Թեւաւոր խօսքեր) Կարապետ Արք. Պալատեցի, Տարեկան Քարոզչիք (Ընտրանի): Վերջին այս ժողովածուի պատրաստութեան առիթով տեղին է մէջբերել Յովնան Արք. Տէրտէրեանի առաջաբանի հատուածը, ուր խօսուած է նոր հատորեակի պատրաստութեան մասին.

«Ոսկեղենիկ» մատենաշարի Ե. գրքոյկով ջերմ փափագն ունեցանք պանծացնել լիշատակը՝ հոգիով հօգր Պատրիարքին: Հայ եկեղեցոյ պատմութեան երկնակամարին վրայ որոշապէս գրուած է բարի անունը Խաչատուրեան Պատրիարքին՝ մեզի ծանօթ Գարեգին Տրապիզոնցի անունով: Սիրելի՛ ընթերցող, կը կամենա՞ս պայծառակերպել հոգիդ ու միտքդ աստուածային լոյսով: Ուրեմն կարդա՛ կենսատու խօսքերը Գարեգին Խաչատուրեանին»:

Սփիւռքահայուն Ստեղծած Markoo.Am

Շարունակուած էջ 13-էն

Հարթակը առիթ կու տայ առանց յաւելեալ ջանքերու եւ ժամանակի կորուստի կապ ստեղծելու ապրանք արտադրողին եւ վաճառքի խթանումը ապահովող կողմին միջեւ: «Markoo.am»-ը ամբողջովին հայկական է: Ես յատուկ կերպով մշակած եմ Հայաստանի շուկային եւ մտածելակերպին համար եւ իրականացուցած եմ այս գաղափարը, բայց վերջինս սկզբնական շրջանին եղած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ: Այսօրու ընէ սկսեալ, կայքը արդէն գործի անցած է եւ մենք ունինք մեծ թիւով գրանցուած ազդեցիկ դէմքեր, նոյնիսկ՝ գործարարութիւններ», - նշեց «Markoo.am»-ի հիմնադիրը: Գործարարական ընկերութիւնը, ստանալով ազդեցիկ դէմ-

քերուն յայտերը, պիտի որոշէ, թէ որ ազդեցիկ դէմքը ընտրէ՝ իր աշխատանքին համապատասխան: Հարթակը՝ բացի իր հիմնական գործառնոյթէն, օգտուողներուն համար պիտի ծառայի նաեւ որպէս վերապատրաստման ակադեմիա: «Նոյնիսկ վերապատրաստում կայ անոնց համար, որոնք կ'ուզեն դառնալ ազդեցիկ դէմքեր. ինչպէս պէտք է նկարեն, տեսահոլովակներու մշակում ընեն, գովազդ պատրաստել սորվին», - եզրափակեց սփիւռքահայ գործարարը: Հարթակը աշխարհի որեւէ անկիւնը ապրող հայ ազդեցիկ դէմքերուն համար է: Հիմնադիրին խօսքով՝ բոլոր հայ ազդեցիկ դէմքերը մէկ Հարթակի վրայ հաւաքելը հիմք կը հանդիսանայ տեղական գործարարութեան զարգացման համար: Ան վստահ է, որ համագործակցութիւնները պիտի սկսին յառաջիկայ շաբաթ եւ պիտի արձանագրուին յաջողութիւններ:

ՄԵՆՔ ԿԱՊԱՀՈՎԱԳՐԵՆՔ ՁԵՐ ԱՊԱԳԱՆ, ՈՐՊԵՍՁԻ ԴՈՒՔ ԿԵՆՏՐՈՆԱՆԱՔ ՆԵՐԿԱԻ ՎՐԱ



RESIDENT INSURANCE PRODUCER Accident and Health Agent, Casualty Broker-Agent, Life-Only Agent, Property Broker-Agent

209 E. Alameda Ave., Suite 204 Burbank, CA 91502

WE INSURE YOUR FUTURE, SO YOU CAN FOCUS ON THE PRESENT



KARAPET S. DEMIRCHYAN CA LICENSE: 0C74479 demkarsinc@sbcglobal.net (818) 913-2414

«Մանչեսթր Սիթին» Յաղթեց Եւ Առաջ Անցաւ «Լիվերփուլին» Ու «Չելսիին»

Անգլիոյ առաջնութեան 15-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթր Սիթին» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Ուոլթֆորտի» հետ: Քաթալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

«Չելսին» 3:2 արդիւնքով պարտուեցաւ «Ուեսթ Հէմ Եունայթըտին» իսկ, «Լիվերփուլը» մրցակիցի դաշտին վրայ 0:1 արդիւնքով յաղթեց «Ուոլթֆորտի» համախառն յաղթանակով:

«Մանչեսթր Սիթին» 35 կէտով գլխավորեց մրցաշարային աղիւսակը՝ ետ ձգելով «Լիվերփուլին» (34 կէտ) եւ «Չելսին» (33 կէտ):

«Մանչեսթր Եունայթըտի» Եւ «Թորքընին» Յաղթական

Անգլիոյ առաջնութեան 15-րդ հանգրուանին «Մանչեսթր Եունայթըտ» սեփական դաշտի վրայ մրցեցաւ լոնտոնեան «Քրիսթալ Փելասի» հետ: Գերմանացի Ռալֆ Ռանկնիկի նորամուտը որպէս «Եունայթըտի» գլխավոր մարզիչի պաշտօնին յաղթական էր՝ 1:0 արդիւնքով:

«Թորքընսի» իտալացի Անտոնիո Կոնտիի գլխավորութեամբ ընդունեց վերջին տեղը գրաւող «Նորուիչ Սիթին» եւ առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:

«Թորքընսի» 14 խաղէ ետք 25 կէտով 5-րդ դիրքի վրայ է, իսկ «Մանչեսթր Եունայթըտ» 15 խաղի ընթացքին վաստակած է 24 կէտ եւ 6-րդն է:

«Պայրըն» Պարտութեան Մատնեց Տորթմուդի «Պորուսիային»՝ 3:2



Գերմանիոյ առաջնութեան 14-րդ հանգրուանին ախոյեան Միւնխի «Պայրընը» Տորթմուդի մէջ հիւրընկալուեցաւ «Պորուսիայի» կողմէ: Գերմանացի Եոլլիան Նազեխիմանի գլխավորած խումբը յաղթանակ արձանագրեց 3:2 արդիւնքով:

Հիւրերու կազմին մէջ երկու կողմ հեղինակ դարձաւ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանդովսկին, աչքի ինկաւ նաեւ ֆրանսացի յարձակող Քինգսլի Քոման:

«Պայրըն» 34 կէտով կը գմեաւորէ դասաւորման աղիւսակը, «Պորուսիան» 4 կտք ետ է եւ երկրորդն է:

«Արալանթայի» Յաղթանակը «Նափոլիի» Նկատմամբ

Իտալիոյ առաջնութեան 16-րդ հանգրուանին «Նափոլին» ընդունեց «Աթալանթային» եւ պարտութիւն կրեց 2:3 արդիւնքով:

«Նափոլին» 36 կէտով երրորդ դիրքի վրայ է եւ 1 կէտ ետ է երկրորդ տեղը գրաւող «Ինթերէն»-է: Առաջատար «Միլանն» է, որ ունի 38 կէտ:

«Ռոմա» - «Ինթեր»՝ 0:3

Իտալիոյ առաջնութեան 16-րդ հանգրուանին ախոյեան «Ինթերը» հիւրընկալուեցաւ «Ռոմայէն»-է: Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:

Հիւրերը «Ռոմայի» բերդին կատարեցին 4 հարուած, որմէ 3-ը վերածուեցաւ կոլի:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» հիմնական կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ խաղին:

«Ինթերը» 37 կէտով երկրորդ դիրքի վրայ է եւ 1 կէտ ետ է առաջատար «Միլանէն»-է: «Ռոման» 5-րդն է՝ 25 կէտ:

«Կատիսը» Պարտութիւն Կրեց, Զարոյեանը Մասնակցեցաւ Ամբողջ Զանդիպումին

Սպանիոյ առաջնութեան 16-րդ հանգրուանին «Կատիսը» հիւրընկալուեցաւ «Էլչէի» կողմէ եւ պարտութիւն կրեց 1:3 արդիւնքով:

Հայաստանի հաւաքականի պաշտպան վարպետ Հարոյեանը

Ռուսաստանը Երրորդ Անգամ Նուաճեց Թենիսի Տեխիսի Գաւաթը



Թենիսի Ռուսաստանի հաւաքականը պատմութեան մէջ երրորդ անգամ ըլլալով նուաճեց Տեխիսի գաւաթը՝ աշխարհի ոչ պաշտօնական խմբային առաջնութեան յաղթողի կոչումը:

Մատրիտի մէջ տեղի ունեցած եզրափակիչին ռուսերը մրցեցան Խորուաթիայի խումբին հետ եւ առաւելութեան հասան մենախաղի երկու հանդիպման՝ 2:0 արդիւնքով:

Ռուսաստանի հաւաքականին հետ գաւաթակիր դարձան նաեւ Կարէն Խաչանովը, Ասլան Կարապետը եւ Եւգենի Տոնսկոյը:

Ռուսաստանի հաւաքականը Տեխիսի գաւաթը նուաճած է նաեւ 2002-ին եւ 2006-ին:

Լիոնել Մեսի. Երբեք Չեմ Ցանկացած Ըլլալ Լաւագոյնը Պատմութեան Մէջ

Ֆրանսական ՊՍԺ-ի եւ Ամերիկայի գաւաթակիր Արժենթինայի հաւաքականի յարձակող Լիոնել Մեսին յայտարարած է, որ ինքն իրեն չի համարեր բոլոր ժամանակներու լաւագոյն ֆուտպոլիստ:



«Ես երբեք չեմ ըսած, որ ես եմ բոլոր ժամանակներու լաւագոյն ֆուտպոլիստը: Ուրախ եմ, որ ինձ կը համարեն լաւագոյններէն մէկը, այդ ալ բաւարար է: Այդ ինձ չի հետաքրքրեր, երբեք չեմ ցանկացած ըլլալ լաւագոյնը պատմութեան մէջ:

Յիշեցնենք, որ 34-ամեայ ֆուտպոլիստը 7-րդ անգամ արժանացած է աշխարհի լաւագոյն խաղացողի «Ոսկէ գնդակ» մրցանակին:

ՊՍԺ-ն Վերջին Պահուն Փրկուեցաւ Պարտութենէն

Ֆրանսայի առաջնութեան 17-րդ հանգրուանին ՊՍԺ-ն մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Լանսի» հետ: Արժենթինացի Մաուրիսիո Պոչետինոյի գլխավորած խումբը բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով՝ 1:1:

Դաշտի տէրերը 62-րդ վայրկեանին առաջ անցան հաշուի մէջ: Աչքի ինկաւ կոտորիվուարցի կիսապաշտպան Սեկո Ֆոֆանան:

ՊՍԺ-ին պարտութենէն փրկեց հոլանտացի կիսապաշտպան Ժորժինիօ Վեյնալդուի կողմէ աւելացուած ժամանակի ընթացքին:

ՊՍԺ-ն 42 կէտով կը գլխավորէ աղիւսակը: Երկրորդ տեղի վրայ ընթացող «Մարսելը» 16 խաղի ընթացքին վաստակած է 29 կէտ:

Մատրիտի «Ռեալը» Դարձեալ Յաղթական

Սպանիոյ առաջնութեան 16-րդ հանգրուանին Մատրիտի «Ռեալը» հիւրընկալուեցաւ «Ռեալ Սոսյետատէն»-է: Իտալացի Կառլօ Անչետտիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

Խաղի 17-րդ վայրկեանին մկանային վնասուածք ստացաւ «Ռեալի» ֆրանսացի յարձակող Քարիմ Անզեման: Անոր փոխարինեց սերպ յարձակող Լուկա Շովիչը, որու փոխանցումէն յետոյ 47-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ պրագիլացի յարձակող Վինիսիոս Ժոնիորը: 10 վայրկեաննոց Լուկա Շովիչը կրկնապատկեց Արքայական խումբի առաւելութիւնը:

«Ռեալը» 39 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 8 կէտ առաջ է երկրորդ դիրքի վրայ գտնուող «Սելտիայէն»-է, որ 1 հանդիպում նուազ խաղած է:

«Կատիսի» հիմնական կազմին մէջ էր եւ խաղացաւ ամբողջ հանդիպումին, 58-րդ վայրկեանին ալ դեղին քարտ ստացաւ: